# ՆՈՐ ՋՈՒՂԱ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ    ԺԶ ՏԱՐԻ    ԹԻՒ 124    ՅՈՒՆՈՒԱՐ-ՓԵՏՐՈՒԱՐ 2018

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՊԱՇՏՕՆԷՈՒԹԻՒՆ



ՀԱՐՑԱԶՐՈՅՑՆԵՐ



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ





# ՆՈՐ ՄԱՐԴ ԼԻՆԵՆՔ

*Տ. ՍԻՓԱՆ Ծ. ՎՐԴ. ՔԷՉԷՃԵԱՆ*
*Առաջնորդ Սպահանի հայոց թեմի*



«Մի՛ ընդօրինակէք այս աշխարհի մարդկանց վարմունքը, այլ նոր մարդ եղէք նորոգուած մտքերով, որպէսզի իմանալով Աստծու կամքը, ձեր փորձառութեամբ ընտրէ՛ք լաւը, այսինքն՝ ինչ որ բարի է, ինչ որ ընդունելի է նրան եւ կատարեալ»: (Հռոմէացիս 12,2)

Ամանորի սեմին կանգնած, մի կողմից տխուր եւ ուրախ յիշատակներով ճանապարհում ենք հին տարին, իսկ միւս կողմից, նորանոր յոյսերով, ծրագրերով ու նպատակներով փորձում ենք դիմաւորել 2018 թւականը՝ որպէս Նոր Տարի: Կարծէք աւանդութեան է վերածւել, կաղանդի տօնի առթիւ, մեր տարեկան հաշւետուութիւնը կատարելու կրկնութիւնը, որի արդիւնքը երբեմն մեզ ուրախացնում է, եւ երբեմն ոչ՝ անբաւարար իրագործումների զգացում առաջացնելով մեր մէջ: Ընդհանրապէս փորձում ենք յիշել թէ ինչ ենք կարողացել իրագործել, եւ ինչ՝ ոչ, միայն այսքանով արժեւորելով մեր կեանքի տեւալ փուլի կամ ժամանակահատւածի յաջողութիւնը: Բոլորս էլ, քիչ թէ շատ, նոյն կամ նման ձեւով ենք գործում, որովհետեւ այդպէս կաղապարւած է մեր հոգե-մտաւոր ներաշխարհը, սակայն մոռանում ենք, դժբախտաբար, թէ կայ դրանցից շատ աւելի վեր կամ կարեւոր մէկ այլ ճշմարտութիւն:

Որպէս մարդ արարած, բայց յատկապէս որպէս հայ քրիստոնեայ, մի պահ փորձենք մտածել թէ կեանքի յաջողութիւնը մեր կեանքի օրակարգերի իրագործումների մէջ չէ, այլ մեր փոփոխութեան մէջ: Մի փոփոխութիւն, որը սկսւում է մեր ներաշխարհից եւ կարելի է այն կոչել նորոգում: Թերեւս անցնող տարիների ընթացքում մեծապէս յաջողեցինք իրագործել մեր գրեթէ բոլոր ծրագրերը, երազանքներն ու նպատակները, սակայն ինչքանո՞վ կարողացանք փոխւել դէպի լաւը, փոխւել ոչ թէ ֆիզիկապէս, մարմնով կամ արտաքին տեսքով, այլ ներքնապէս, մեր ներաշխարհով, եւ մեր փոփոխութեամբ կամ նորոգումով նոր փայլք, գեղեցկութիւն եւ հմայք ապահովել մեր ներաշխարհին: Իզուր չէ, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա կաթողիկոսը 2017 թւականին պաշտօնական ու հայրապետական հռչակագրով կոչեց «Վերանորոգման տարի», որովհետեւ այդ ահազանգը հնչեցնելու ժամանակը հասած համարեց:

Մի ամբողջ տարի մենք ժամանակ ունէինք մեզ վերանորոգելու, սակայն եթէ պէտք եղած կարեւորութիւնը չընծայեցինք կամ պատեհ առիթը չստեղծեցինք այդ մեծագոյն իրագործման եւ կեանքի բարձրագոյն յաջողութեան համար, դեռեւս ուշ չէ, թերեւս կաղանդի եղբայրական հոգեւոր այս պատգամը մէկ անգամ եւս ընծայում է մտածելու նորոգութեան անհրաժեշտութեան հրամայականի մասին: Եթէ հարց տանք թէ ի՞նչ է նորոգումի կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը, կարելի է ասել թէ վերանորոգումը երաշխիքն է զարգացման, հզօրացման ու յաւերժացման:

Բնականաբար, մանաւանդ որպէս Քրիստոնեաներ, կարիք ունենք հոգեւոր ու բարոյական վերանորոգման, որովհետեւ մեր մարդկային մեղանչական բնութիւնը մեզ գայթակղութեանց մղելով, քիչ թէ շատ, ապականում է մեր ներաշխարհը, որոնց որպէս լաւագոյն դարման եւ աղբիւր կարելի է համարել աղօթքը, Աստւածաշունչը, բարեգործութիւնն ու եղբայրասիրութիւնը: Նոր Կտակարանը մի կողմից մեզ ներկայացնում է նորոգման անյետաձգելի ու հրամայական անհրաժեշտութիւնը, իսկ միւս կողմից նրանց մայր աղբիւրը հասցէագրում է Աստծու որդին՝ մեր Տէրն ու Փրկիչը՝ Յիսուս Քրիստոսը, եւ շեշտում է թէ մարդը, աշխարհը, տիեզերքն ու կեանքը, այլ խօսքով ամէն ինչ Քրիստոսով է որ նորոգւեց ու վերանորոգւում է: Քրիստոնեան, որպէս տիպար մարդ արարած, կոչւած է Քրիստոսով նորոգելու իր ներաշխարհն ու ողջ կեանքը, եւ դա Աստծու կողմից մեզ տրւած պարգեւ ու շնորհք է, որպէսզի բարելաւենք մեր յարաբերութիւնը Աստծու հետ եւ մօտենանք մեր Երկնաւոր Հօրը: Քրիստոսով իրագործւած մեր ներաշխարհի Քրիստոնէական վերանորոգումը այնպիսի մի ուժ է, որի դիմաց ոչ մի խոչընդոտ, արգելք, կամ պատնէշ չի կարող կանգնել, դիմանալ ու յաղթահարել: Նորոգութեան հրամայականը այնքան կենսական է, կարեւոր ու անհրաժեշտ, որ նրա մասին իւրայատուկ հրաւէր, յորդոր, ճառ եւ քարոզ գտնում ենք հայրաբանական գրականութեան կամ եկեղեցու հայրերի գրութեան մէջ:

Յստակեցման համար, թոյլ տւէք, որ ճշտենք նորոգման իսկական ուղին կամ գործընթացը. Քրիստոնէական նորոգումը մեր ներաշխարհին՝ պարզապէս պակասը ամբողջացնել, թերին լրացնել, ծուռը շտկել կամ պարբերաբար ու պատահական նորոգում չէ, ոչ էլ տեւական նորոգում, այլ նրա ճշգրիտ գործընթացը նախ գիտակցելն է, ապա զղջալը, ապաշխարելը, Աստծուն դառնալը, խոստովանելն ու ինքն իրեն Աստծուն յանձնելն է: Սա է, որ թելադրում եւ ուսուցանում է մեզ Աստուածաշունչը, եւ սա է մեր գլխաւոր կոչումն ու պարտականութիւնը, որպէս ներկայ դարի այս ալեկոծեալ աշխարհում ապրող հայազգի քրիստոնեաներ: Ուստի, 2018 թւականը, որպէս Նոր տարի, իր հետ թող բերի մեր կողմից ցարդ չօգտագործուած լաւագոյն ու պատեհ առիթը, որպէսզի մեր ամբողջական ազատ կամքով վերանորոգենք մեր անձերը, մեր նկարագիրն ու մեր ներաշխարհը՝ դառնալով մեր նախահօր աստուածակերտ տիպարին, եւ վերականգնելով մեր քրիստոնէական ուխտը, որդեգրութիւնն ու հաւատարմութիւնը մեր Երկնաւոր Հօր հանդէպ, եւ որպէս Աստծու հնազանդ զաւակները, ողջագուրելով իրար կարողանանք մաքրամաքուր մտքով, սրտով ու հոգով ասել իրար.- «Շնորհաւոր Նոր տարի»...:

25 դեկտեմբերի, 2017

## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՒ ԵՆԹԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐԻ ՀԵՏ

Ամփոփելով 2017 թւականը, Ազգային Առաջնորդարանի Հանրային կապի գրասենեակը կազմակերպեց հարցազրոյց Թեմիս Թեմական խորհրդի եւ Կրթական, Կալուածա-Տնտեսական ու Բարեսիրական մարմինների ներկայացուցիչների հետ, որտեղ ներկայացւեց նորընտիր մարմինների աշխատանքային 10-ամսեայ զեկոյցը:



### Թեմական խորհրդի ատենապետ՝ պրն. Վարուժ Մինասեան



Նորընտիր Թեմական խորհուրդը իր աշխատանքի սկզբնական օրերից իսկ կարեւորել է կարգապահութիւնը, պարտաճանաչութիւնը, փոխադարձ համագործակցութիւնը եւ համերաշխութիւնը: Թեմական խորհրդի եւ Խորհրդարանի պատգամաւորի, Պատգ. Ժողովի, Կրօնական խորհրդի, Հաշւեքննիչ մարմնի, ենթամարմինների, յանձնախմբերի եւ պաշտօնեաների միջեւ համագործակցութիւնները գտնւում են բարձր մակարդակի վրայ:

Հիմք ընդունելով Պատգ. ժողովի որոշումները, Խորհուրդս ձեռնամուխ է եղել՝

-աւարտին հասցնել կիսաւարտ աշխատանքները, ինչպէս՝ ծրագրել է Երիտասարդական համալիրի կառուցման գործընթացը աւարտել մինչեւ իրանական նոռուզը,

-նիւթական աղբիւրները լրացնել եւ ստանալ նախկին պարտքերը, այս նկատառումով հիմքը դրւել է

տուրիզտական բնագաւառի աշխատանքների վրայ, օրինակ Ամանորեայ եռ ու զեռի ստեղծում, ծրագրերի մշակում իրանական նոռուզի համար եւ այլն

-նկատի ունենալով երիտասարդների կարեւոր դերը, խորհրդի երկու անդամներ գործուղուել են Հայաստան, ուսումնասիրութիւններ կատարելով՝ մշակել ծրագիր,

-ծրագրում է զարգացնել տուրիզմի բնագաւառը, որի նպատակով եւս կազմակերպուել են սեմինառներ, ընթացքի մէջ է հիւրանոց-կացարանների կառուցման կամ ստեղծման աշխատանքը

-վարձակալման յանձնուած խանութների համար կիրառել վարձավճարների աւելացման նոր ձեւեր եւ մշակել մի շարք ծրագրեր

-ընթացքի մէջ է Խոջայ Պետրոս պողոտայում նոր համալիր կառուցելու արտօնագրերի ստացումը, որի նպատակն է սակաւաթիւ ընտանիքների տեղափոխումը սոյն համալիր,

Նշւած ժամանակահատուածում իրագործել է ներքոյիշեալ աշխատանքները՝

-Տեղի է ունեցել Նոր Ջուղայի Հայ Մարզա-Մշակութային «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի նորակառոյց շէնքի բացումը եւ Շահինաշհրի հայոց ազգային դպրոցների իրավիճակի կարգաւորումը

-Առաջնորդարանի բարեզարդումը, խոնաւազերծումը եւ նոր գրասենեակների դասաւորութիւնը

-Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի հայ նահատակների յուշաքարի պատրաստումը եւ բացման արարողութիւնը

-Համաձայնութիւններ է կատարել պետական մի շարք հիմնարկների հետ եւ նախատեսւում է մինչեւ իրանական 1400 թւականը՝ Նոր Ջուղան դարձնել Սպահանի տուրիզմի կենտրոն՝ մշակելով տուրիստական ծրագրեր եւ ստեղծելով հայկական դիմագիծ

-Շարունակել է Հայաստանի հետ մեր սերտ յարաբերութիւնները եւ ընթացքի մէջ է Սպահան-Երեւան քաղաքները, որպէս քոյր քաղաքներ յայտարարելու աշխատանքը:

-Սերտ համագործակցութեան մէջ ենք Սպահանի համալսարանի հայագիտական ամբիոնի հետ:

-Նախատեսում է մօտ ապագայում Առաջնորդարանի տարածքում բացել Ազգագրական թանգարան:

-Երկու ամսից՝ Խորհրդիս գործունէութեան մէկ տարւայ ժամանակաշրջանի աւարտին, տեղի է ունենալու ժողովրդական հանդիպում, որտեղ ներկայացւելու է մանրամասն զեկոյց:

## Թեմական խորհրդի փոխ-ատենապետ՝ դկտ. Վաչիկ Հայրապետեան



Դկտ. Հայրապետեանը կատարեց մի շարք յաւելումներ՝

Նշւած ժամանակահատուածում տեղի է ունեցել վարչական մի շարք փոփոխութիւններ՝ աշխատանքային արդիւնաւետութիւնը բարձրացնելու նպատակով:

Վերանայւել է Առաջնորդարանին առնչակից բոլոր պաշտօնեաների պայմանագրերը եւ կարեւորելով պարտաճանաչութիւնը եւ կարգապահութիւնը՝ նկատի է առնւել խրախուսական միջոցներ:

Առաջնորդարանում աւելացւել է ֆինանսական տնօրէնի պաշտօնը՝ վճարումների եւ գործարքների պարագային առաւել հսկողութիւն մտցնելու նպատակով:

Խորհուրդս կարգաւորել է Առաջնորդարանի պահեստի եւ գոյքագրման աշխատանքը եւ նշանակւած պատասխանատուի հետ ճշտել թւով մեծ գոյքերի պիտանիութիւնը: Կարգաւորւել է նաեւ գնումների պարագան՝ երկրի նորմերի համաձայն:

Մայիս ամսի սկզբից սկսւել է Հայոց Ազգային դպրոցների նոր կարգավիճակի մասին բծախնդրօրէն կատարւած ուսումնասիրութիւնները եւ Կրթական ոլորտում կատարւել են ակնառու փոփոխութիւններ, որի արդիւնքում հնարաւոր դարձաւ միջնակարգի առաջին օղակը դարձնել ոչ պետական եւ ազգային-բարեսիրական, որի հիման վրայ էլ փոփոխւեցին տեսուչները, ուսուցչական կազմերը եւ դասարանները կազմւեց երկսեռ:

## Կրթական խորհրդի ատենապետ՝ տկն. Մարգարիտ Դաւթեան



Խորհուրդս իր առաջին նիստը գումարել է թւականիս մայիսի 7-ին՝ 7 հոգանոց կազմով:

Մարմինս կատարել է հետեւեալ աշխատանքները՝

-«Քանանեան» եւ «Կատարինեան» դպրոցների 8 աշակերտ-աշակերտուհիներ օգոստոս ամսին մասնակցելով Հայաստանում կազմակերպւած հայագիտական համահայկական 8-րդ օլիմպիադային՝ յաջողել են արժանանալ առաջին պատւանդանին:

-Խորհրդիս ուշադրութեան կենտրոնում է եղել Հայոց Ազգային դպրոցների կարգավիճակը եւ այս խնդրով կազմակերպել է բազմաթիւ խորհրդակցական հանդիպումներ՝ Թեմական խորհրդի, դպրոցների տեսչութեան, ուսուցչական կազմերի եւ ծնողական խորհուրդների հետ:

Յետ խորհրդակցութիւնների եւ ուսումնասիրութիւնների դպրոցներում տեղի է ունեցել մի շարք փոփոխութիւններ: Դպրոցները դարձել են ոչ-պետական եւ «Քանանեան» ու «Կատարինեան» դպրոցների 7-ից 9-րդ դասարանները միաւորել են: Հայոց Ազգ. «Արմէն» կրթահամալիրի օրիորդաց բաժնի, «Քանանեան» օրիորդաց միջնակարգ դպրոցի եւ «Կատարինեան» տղայոց միջնակարգ դպրոցի առաջին օղակների համար նշանակւել են նոր տեսուչներ:

Փոփոխութեան են ենթարկւել մի շարք ուսուցիչներ եւ մասնագիտական դասերի համար աշխատանքի են հրաւիրւել փորձառուներ:

«Կատարինեան» դպրոցում աւելացել է «Համակարգչի» ճիւղը:

-Հայոց ազգ. Մանկապարտէզ-նախակրթարանում ստեղծւել են մի շարք նոր հնարաւորութիւններ, իսկ աշակերտութեան թիւը, բարեբախտաբեր, աճ է արձանագրել:

-Դպրոցների աշխատաւորների համար դասաւորւել է միանման աշխատանքային հագուստ:

-Դպրոցներում սրտցաւօրէն աշխատում են Ծնողական խորհուրդները:

-Հայոց ազգ. կրթահամալիրում դասաւորւել է Խորհրդիս գրասենեակը:

-Շահինշահրի Հայոց ազգ. դպրոցների հսկողութիւնը եւս վերապահւած է Խորհրդիս: Այժմ աշխատում են «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանը եւ «Սրբոց Վարդանանց» տարրական օղակը:

-Շահինշահրի դպրոցների կառավարման հարցում իրենց սերտ համագործակցութիւնն են ցուցաբերել Շահինշահրի համայնքային վարչութիւնը:

-Տօնւել է Ս. Թարգմանչաց եւ Մշակոյթի տօնը, հայ ուսուցչի տօնը եւ կազմակերպւել է նորամուտ ուսանողների գնահատման երեկոն:





## Կալւածա-Տնտեսական մարմնի ատենապետ՝ պրն. Րաֆֆի Ալեքսանդրեան

Մարմինս իր առաջին նիստը գումարել է թւականիս ապրիլին՝ 5 հոգանոց կազմով:

Մարմինս կատարել է հետեւեալ աշխատանքները՝

-Վերանորոգւել է բոլոր բնակարանների եւ խանութների պայմանագրերը եւ յաւելում են կրել վարձավճարները:

Շուրջ 17 բնակարաններ աւելացել են անվճար համակարգում եւ այժմ 59 ընտանիքներ իրենց տրամադրւած բնակարանի վարձավճարի դիմաց որեւէ վճարում չեն կատարում:



-Առաջնորդարանի խանութները համարւում են եկամտաբեր աղբիւրներից մէկը եւ այդու խանութների վարձավճարները մօտաւորապէս բարձրացել է 100 տոկոսով:

-Կատարել է բոլոր կալւածների թէ՛ մասնակի եւ թէ՛ հիմնական նորոգութիւնները:

-Աշխատանքի ենք ընդունել Կազմիս նոր իրաւաբան՝ պրն. Մոխթարեանին, ով շուտով ունենալու է իր իրաւաբանական գրասենեակը առաջնորդարանի շրջափակում եւ սատար է հանդիսանալու Համայնքիս ժողովրդին՝ իրաւական հարցերի ցուցմունքներով:

-Ընթացքի մէջ է Ս. Ա. Վանքի հարեւանութեամբ գտնւող մի հին բնակարանի նորոգութիւնը, որը դառնալու է տուրիստական կենտրոն:

-Աւարտել է Ս. Ա. Վանքի հիւսիսային հարեւանութեամբ գտնւող երիտասարդների համալիրի շինարարական աշխատանքները եւ արդէն իսկ ընդունել է վարձակալման դիմումներ: Սոյն համալիրին կից 6 խանութներ վարձակալութեան է յանձնել համայնքիս անդամներին:



-Փականագինը այլոց պատկանող առաջնորդարանի խանութների համար մշակել է նոր կանոնակարգ եւ կանխել է բոլոր ոչ-կանոնաւոր ընթացքները:

-Եօթ նորապսակ զոյգերի Նոր Ջուղայում եւ Շահինշահրում տրամադրել է բնակարան վարձակալելու գրաւ գումար:

-Նախատեսւում է հնամենի բնակարանները պարպել եւ վարձակալներին տեղափոխել աւելի յարմար բնակարաններ:

## Բարեսիրական մարմնի ատենապետ՝ տկն. Ռայա Խուդավերդեան



Մարմինս իր առաջին նիստը գումարել է թւականիս ապրիլի 20-ին՝ 5 հոգանոց կազմով:

Մարմինս կատարել է հետեւեալ աշխատանքները՝

-Համայնքիս 33 հիւանդներին ցուցաբերւում է նիւթական օժանդակութիւն՝ բժշկական ծախսումների դիմաց, որը որոշ հիւանդներին վճարւում է ամբողջովին, իսկ ոմանց 70 տոկոսի սահմաններում (քիմիաթերափիայի, հոգեթերափիայի, բուժահետազօտական եւ ...)

-Վճարել է Արցախի մէկ ազատամարտիկի բուժման ծախսերը՝ 500 ԱՄՆ դոլարի սահմաններում

-Նոր Ջուղայի 36 եւ Շահինաշհրի 14 կարիքաւոր ընտաիքների կատարել է ամսական վճարումներ՝ ճշտւած չափանիշների հիման վրայ:

-Մարմինս առանձին, իսկ Թեմական խորհուրդը առանձին կարիքաւոր ընտանիքներին տրամադրել է նիւթական նւէրներ՝ Նոր Տարւայ առթիւ:

-Համայնքիս 57 ընտանիքներ վայելում են «Քոմիտէ Էմդադէ Էմամ Խոմէյնիի» եւ «Սալամաթէ Իրանիան» բուժսպասարկման կենտրոնի հովանաւորութիւնը, որոնցից ստանում են առանձին օժանդակութիւններ:

-Մարմնիս մէկ ներկայացուցիչ անդամակցում է Համալսարանական կրթաթոշակների տրամադրման հոգաբարձութեանը:

-Հրաւիրել ենք այցելելու «Աբօլ Ֆազլ» գերմասնագիտական բժշկական կենտրոնի կիսաւարտ շէնք, մօտիկից ծանօթանալու հիմնարկին:



ارجمند گرامی سرکار خانم ویکتوریا هوسپیان

رحمت واسعه پروردگار کریم بسان بزرگ دریای بی کرانی است که هر
کس به اندازه ی ظرف خود از آن برمیدارد. خدای را شاکریم که در
زمانه ای زندگی میکنیم که مردان بزرگی چون شما دارد که این مهم را درک
می کنند و هر روز بیش از گذشته مشمول رحمت خداوند متعال می شوند.
کاشت بذر محبت دنیوی، برداشت رحمت اخروی و احسان والای
روزافزون شما را خواستارم.

شهریور ۱۳۹۶

-Սեպտեմբեր 5-ին, Մարմնիս գործավար՝ **տկն. Վիկտոր Յովսէփեանի** հետ մասնակցել ենք Սպահանի պետական համալսարանում կազմակերպուած մեծարման երեկոյին, որի ընթացքում Թեհրանի գերտեսչութեան տնօրինութեան անունից ստացել ենք գնահատագրեր:

-Համագործակցում ենք «Միլադ» հիւանդանոցի հետ, որի հնարաւորութիւններից օգտւում են համայնքիս կարիքաւոր անդամները:

-Երկրի արեւմտեան հատուածում տեղի ունեցած երկրաշարժի ընթացքում կատարել ենք 10 միլիոն թուման օժանդակութիւն:









## ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՊԱՇՏՕՆԷՈՒԹԻՒՆ



-Դիւանատան պատասխանատու՝ Ռիմա Մարկոսեան

-Ֆինանսական տնօրէն՝ Անգին Հայրապետեան

-Հանրային կապի գրասենեակի պատասխանատու՝ Մանիա Ղուկասեան

-Հաշուապահներ՝ Ասպետ Մարգարեան, Սարինէ Յարութիւնեան

-Պատգամաւորական ժողովի գրասենեակի գործավար՝ Սօսէ Մարգարեան

-Կալուածա-Տնտեսական մարմնի գործավար՝ Ծահէն Թահմազեան

-Կալուածա-Տնտեսական մարմնի գրասենեակի քարտուղար՝ Ադրինէ Ղեւեան

-Կրթական խորհրդի գործավար՝ Մադլէն Ղարիբեան

-Բարեսիրական մարմնի գործավար՝ Վիկտոր Յովսէփեան

-Պահեստների պատասխանատու՝ Վահէ Ակոն

-Կրօնական խորհրդի գործավար՝ Վահէ Թորոսեան

-Կրօնական խորհրդի գրասենեակի քարտուղար՝ Լեռնիկ Ծատուրեան

-«Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի պատասխանատու՝ Վերգինէ Միրզախանեան

-Արխիւատան պատասխանատու՝ Թովմա Գալստանեան

-«Խաչատուր վրդ. Կեսարացի» թանգարանի պատասխանատու՝ Զարեհ Ղարախանեան

-«Խաչատուր վրդ. Կեսարացի» թանգարանի պաշտօնեաներ՝ Արմինէ Փանոսեան, Արլետ Հայրապետեան, Արին Թորոսեան

-«Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու պատասխանատու՝ Ռաբերտ Ակոն

-«Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու պաշտօնեայ՝ Րաֆֆի Ղարիբեան

-Տեխնիկ աշխատանքների պատասխանատու՝ Կարէն Աբէդեան

-Մոմավառութեան կենտրոնի պատասխանատու՝ Հիլդա Խաչատրեան

-Մուտքի տոմսերի վաճառքի պատասխանատու՝ Անուշ Հայրապետեան եւ մուտքի հսկիչներ՝ Յովսէփ Աւետեան եւ Էջմին Սէթաղայեան

-Գիշերուայ պահակներ՝ Երւանդ Յովսէփեան, Անդրիկ Գրիգորեան

-Սպասարկողներ՝ Սիրան Սարեան, Ցոլիկ Ծամիրեան, Արտուշ Յակոբեան, Ժորժիկ Աբրահամեան, Մկրտիչ Ծահիջանեան

-Առաջնորդարանի վարորդ՝ Վազգէն Խաչիկեան

-Այգեպան՝ Վիգէն Իւնիքեան

## ՍՊԱՀԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՂՈԴՐԱԹՕԼԼԱՀ ՆՈՌՈՒԶԻԻ ԱՅՑԸ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐ ՌԱՅՄՈՆԴ ԽԱԹՈՒՆ ՆԵԺԱԴԻ ԵՒ ՀՐԱՉ ՅԱԿՈԲԵԱՆԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ



ԻՄՆԱ լրատուական գործակալութիւն - Ամանորի եւ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդի առիթով, Սպահանի քաղաքապետ Ղոդրաթօլլահ Նոռուզին այցելել է հայ նահատակներ Ռայմոնդ Խաթուն Նեժադի եւ Հրաչ Յակոբեանի ընտանիքներին:

Հանդիպումների ընթացքում քաղաքապետը շնորհաւորելով Նոր Տարին եւ Ս. Ծնունդը, իր երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնն է յայտնել հայ նահատակների ընտանիքներին՝ իրենց զաւակներին հայրենիքի պաշտպանութեան սուրբ գործին զոհաբերելու համար: Նա յոյս է յայտնել, որ Իրանում՝ հայ նահատակների ընտանիքների համար ստեղծուելու են բարեկեցիկ կեանք վայելելու անհրաժեշտ բոլոր պայմանները:

Քաղաքապետն իր արտայայտութիւնների մէջ ընդգծելով Իրանում միաստուածեան կրօնների հետեւորդների խաղաղ համակեցութիւնը, հարկաւոր է գտել, որ դա օրինակ ծառայի ամբողջ աշխարհին, որպէսզի բոլորը կողք-կողքի ապրեն խաղաղութեամբ եւ համերաշխութեամբ:

Սոյն հանդիպման ընթացքում նահատակ Հրաչ Յակոբեանի հայրն իր ու շնորհակալութիւնն է յայտնել Պրն. Նոռուզիին՝ կատարած այցելութեան համար: Նա բարի տարի է մաղթել Իրանի Իսլամական հանրապետութեան մեծայարգ առաջնորդի եւ ողջ ժողովրդի համար, նաեւ յոյս է յայտնել, որ Նոր Տարին լինելու է բարեբեր տարի Իրանի համար եւ Սպահանի ժողովուրդը ականատեսն է լինելու ջրառատ Զայանդէռուդի:

## ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՌԹԻՒ ՍՊԱՀԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԱՅՑԸ՝ Ս. Ա. ՎԱՆՔ



Ամանորի եւ Ս. Ծննդեան տօների առթիւ, չորեքշաբթի՝ 3 յունուար 2018 թուականին, Ս. Ա. Վանք այցելեցին Սպահանի նահանգապետ՝ Մոհսէն Մեհր Ալիզադէն եւ նրան ընկերակցող բազմանդամ պատուիրակութիւնը՝ նահանգապետի օգնականներ եւ խորհրդականները:

Հիւրերին դիմաւորեցին Սպահանի հայոց թեմի առաջնորդ՝ գերպ. տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Պատգամաւորական ժողովի դիւանի անդամ Գեղարդ Մանսուրեանը, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետներ Վարուժ Մինասեանը եւ Վարուժ Մովսիսեանը, երկու խորհուրդների անդամները եւ Նոր Ջուղայի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ Վահէ Թորոսեանը:

Պրն. Մեհր Ալիզադէն շնորհաւորելով Ամանորը եւ Ս. Ծնունդը նշեց. «Աշխարհում շատերը փորձում են կրօնների միջեւ տարաձայնութիւն եւ հակադրութիւն առաջացնել՝ իրենց յետին նպատակներն իրագործելու համար, սակայն ժողովրդին նման իրավիճակներից ապահով պահելու միակ ձեւը, դա հաւատքն է Աստծուն եւ կրօնին»:

Ողջունելով պատուիրակութեան անդամներին, թեմակալ առաջնորդն իր ուրախութիւնը յայտնեց նահանգապետի՝ Ս. Ա. Վանք կատարած առաջին պաշտօնական այցի կապակցութեամբ, նաեւ շնորհակալութիւն յայտնեց Նոր տարւայ եւ Ս. Ծննդի տօների կազմակերպման առթիւ նահանգապետարանի կողմից տրուած արտօնութիւնների համար: Հայր Սուրբն անդրադառնալով երկրում ծաւալուող վերջին իրադարձութիւններին, դա համարեց արտաքին թշնամի ուժերի հրահրումների արդիւնք եւ առ Բարձրեալն Աստծուն խնդրեց Իրանի Իսլամական Հանրապետութեանը խաղաղութիւն եւ անդորրութիւն:

Հանդիպման աւարտին հիւրերին յանձնեցին նուէրներ եւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Հարկ է նշել, որ Նահանգապետի այցելութեան լուրը թողարկելու համար, ներկայ էին Սպահանի տարբեր լրատուական կառոյցների մեծ թւով լրագրողներ:

## ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՌԻԹԻՒ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՍՊԱՀԱՆԻ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՅՑԸ Ս. Ա. ՎԱՆՔ

Չորեքշաբթի՝ 3 յունուար 2018 թուականին Իսլամական Մշակոյթի եւ Առաջնորդութեան Սպահանի գերատեսչութեան ներկայացուցիչները, գլխաւորութեամբ՝ հոջ. Մոհամմադ Ալի Անսարիի, այցելեցին Ս. Ա. Վանք:

Հիւրերին դիմաւորեցին Սպահանի հայոց թեմի առաջնորդ՝ գերպ. տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Պատգամաւորական ժողովի դիւանի անդամ Գեղարդ Մանսուրեանը, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետներ Վարուժ Մինասեանը եւ Վարուժ Մովսիսեանը, երկու խորհուրդների անդամները եւ Նոր Ջուղայի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ Վահէ Թորոսեանը:

Գերատեսուչ հոջ. Անսարին շնորհաւորելով Ամանորը եւ Ս. Ծնունդը, նշեց. «Այսօր առիթ ընձեռւեց թէ՛ Ամանորի եւ Ս. Ծննդեան տօների առիթով եւ թէ՛ այն պատճառով, որ դուք նախապէս այցելութեան էք եկել մեզ մօտ, մենք եւս այցելենք Ս. Ա. Վանք: Յոյս ունենք, որ միշտ մեր հայ հայրենակիցների կողքին ապրելու ենք ուրախ եւ լաւ պայմաններում: Բարեբախտաբար Սպահանում կայ այն առիթը, որպէսզի Միաստուածեան կրօնների հետեւորդները համախմբուած եւ խաղաղ ապրեն մի վայրում»:

Գերպ. տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը ողջունեց եւ բարի գալստեան խօսք ուղղեց ներկաներին: Նա նշեց. «Այս հանդիպումը մեզ համար ոչ միայն փոխադարձ, այլ նաեւ շատ բաղձալի եւ սպասուած հանդիպում է ու թէեւ Ամանորեայ օրերին բազմաթիւ հանդիպումներ ենք ունեցել, սակայն որոշ հանդիպումներ առաւել նշանակալի են, ինչպէս նահանգապետի, քաղաքապետարանի եւ Իսլամական Մշակոյթի եւ Առաջնորդութեան գերատեսչի՝ Ձեր այցելութիւնը: Հայր Սուրբը շեշտեց որ թէեւ ընդունուած է իրանահայութեանն անուանել իբրեւ երկրի կրօնական փոքրամասնութիւններից մէկը, սակայն մենք մեզ որպէս փոքրամասնութիւն չենք վերաբերւում, այլեւ մեզ համարում ենք, որպէս այս երկրի եւ այս ժողովրդի անբաժանելի մի մասնիկը եւ լիիրաւ քաղաքացիներ»:

Հանդիպման աւարտին հիւրերին յանձնւեցին նւէրներ եւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:



## ՍՊԱՀԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԱՒԱՌԱՊԵՏԻ ԱՅՑԸ Ս. Ա. ՎԱՆՔ

Հինգշաբթի՝ 11 յունուար 2018 թուականի առաւօտեան Սպահան քաղաքի գաւառապետ՝ Ահմադ Ռեզւանին, իր պատուիրակութեամբ այցելեց Ս. Ա. Վանք՝ Ամանորի եւ Ս. Ծննդեան տօների առթիւ շնորհաւորանքներ փոխանցելու նպատակով:



Հիւրերին դիմաւորեցին Սպահանի Հայոց Թեմի Առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետեր Վարուժ Մինասեանն ու Վարուժ Մովսիսեանը եւ երկու կազմերի միւս անդամները:

Գաւառապետ Ռեզւանին իր շնորհաւորանքի խօսքը փոխանցեց ներկաներին:

Թեմակալ առաջնորդը եւս իր հերթին իր շնորհակալութիւնը յայտնեց գաւառապետին եւ պատուիրակութեան միւս անդամներին՝ իրենց այցի համար եւ անդրադառնալով Առաջնորդարանի եւ Գաւառապետարանի միջեւ առկայ յարաբերութեանը բարձր գնահատեց այն:

Հանդիպման աւարտին երկու կողմերի միջեւ փոխանակւեց յուշանւէրներ:

## ՍՊԱՀԱՆ ՆԱՀԱՆԳԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ՊԵՏԻ ԵՒ ՆՐԱՆ ՈՒՂԵԿՑՈՂ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՑԸ Ս. Ա. ՎԱՆՔ



Հինգշաբթի՝ 11 յունուար 2018 թուականի առաւօտեան Ս. Ա. Վանք այցելեցին Սպահան նահանգի ոստիկանութեան գլխաւոր պետ Մաասում Բէյգին, Սպահան քաղաքի ոստիկանապետ՝ գնդապետ Եառ Դուսթին, Սպահանի 5-րդ շրջանի ոստիկանապետ՝ գնդապետ Զարէը եւ ուրիշներ:

Հիւրերին դիմաւորեցին Սպահանի Հայոց Թեմի Առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետեր Վարուժ Մինասեանն ու Վարուժ Մովսիսեանը եւ երկու կազմերի միւս անդամները:

Հանդիպման ընթացքում Սպահան նահանգի ոստիկանութեան գլխաւոր պետ Մաասում Բէյգին Նոր տարւայ եւ Ս. Ծննդեան տօների առթիւ յայտնեց շնորհաւորանքի խօսքեր ու մաղթանքներ:

Առաջնորդ Հայր Սուրբը եւս իր հերթին շնորհակալութիւն յայտնեց ոստիկանութեան ամբողջ անձնակազմին մշտապէս, ի մասնաւորի Ամանորեայ տօների ընթացքին, Սպահանի հայահոծ թաղամասի անվտանգութիւնը պահպանելու համար:

Վերջում հիւրերին յանձնուեցին յուշանուէրներ:

## ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՌԹԻՒ «ՄԵԼԼԱԹ», «ՍԱԴԵՐԱԹ», «ՄԵԼԼԻ» ԵՒ «ԹԵՋԱՐԱԹ» ԴՐԱՄԱՏՆԵՐԻ ՍՊԱՀԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՒ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐԻ ՏՆՕՐԷՆՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ՝ Ս. Ա. ՎԱՆՔ









## ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՌԹԻՒ «ԻՍ-ԷԲՆԷ-ՄԱՐԻԱՄ» ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ԱՅՑԸ Ս. Ա. ՎԱՆՔ





# ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ ԳՆԱՀԱՏՈՒԵՑԻՆ 2016-2017 ԵՒ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆՆԵՐԻ ՆՈՐԱՄՈՒՏ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի նախաձեռնութեամբ չորեքշաբթի՝ 2018 թւականի յունւարի 31-ի երեկոյեան, Նոր Ջուղայի հայոց ազգ. կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում կազմակերպւեց միջոցառում, ուր գնահատւեցին 2016-2017 եւ 2017-2018 ուսումնական տարեշրջաններին՝ դոկտորայի, գեր-լիսանսի, լիսանսի եւ գեր-դիպլոմի մակարդակներում երկրի զանազան համալսարաններում ընդունւած Նոր Ջուղայի եւ Շահինշահրի 86 նորամուտ հայ ուսանողներ:

Ուսանողներից եւ նրանց ծնողներից բացի ծրագրին ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, ազգային մարմինների, շրջանի Հայ Դատի յանձնախմբի եւ հայոց ազգ. դպրոցների ներկայացուցիչները:





Ողջոյնի եւ շնորհաւորանքի խօսքերով երեկոն բացւած յայտարարեց Կրթական խորհրդի գրասենեակի պատասխանատու-գործավար եւ օրւայ հանդիսավար Մադլէն Ղարիբեանը:

Միջոցառման առաջին ելոյթը ծաւալեց Կրթական խորհրդի ատենապետուհի Մարգարիտ Դաւթեանը, նշելով, որ բարձրագոյն կրթութեամբ ձեռք բերւող հնարաւորութիւններն ու առաւելութիւնները պէտք է օգտագործւեն ճիշտ եւ նպատակադրւած՝ առանց որեւէ մեծամտութեան: Նա դիմելով նորամուտներին աւելացրեց, թէ հասարակութեան գիտական շտեմարանը հարստացնելուն զուգահեռ, որպէս հայ ուսանողներ եւ յատկապէս փոքրաթիւ մի համայնքի ներկայացուցիչներ՝ առաւել գիտակից ու պատասխանատու կեցւածք ցուցաբերեն այս նոր հաւաքականում եւ յատկապէս ջանք չխնայեն եղած հնարաւորութիւնը հայ ժողովրդի ընդհանրական նպատակներին ծառայեցնելու համար:

Այնուհետեւ օրւայ առթիւ արտայայտւեց գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը: Նա անդրադառնալով նպատակասլաց կեանքի կարեւորութեանը, ընդգծեց, որ բարձրագոյն կրթութեան վկայականից աւելի կարեւոր է մարդու նկարագրի վկայականը: Նա նշելով, որ Իրանում իւրաքանչիւր հայ համալսարանական համարւում է մեր ազգի, եկեղեցու եւ Հայ Դատի դեսպանը, ուսանողներին յորդորեց, թէ համարձակ լինեն եւ գերազանց ուսումնասիրելով կրօնը, հայոց պատմութիւնն ու գրականութիւնը՝ հայ ազգին լաւագոյնս ներկայացնեն նոր միջավայրում:





Ելոյթ ծաւալեց նաեւ Թեմական խորհրդի անդամ դոկտ. Նորայր Թումանեանը, ով սկզբում խորհրդի ջերմ շնորհաւորանքները փոխանցեց նորամուտներին, ապա բարձր գնահատելով կրթութեան դերը ազգերի գոյատեւման հարցում, գիտելիքների ձեռք բերումը 21-րդ դարի երիտասարդի ամենակարեւոր պարտականութիւնը համարեց: Նա շեշտելով, որ այս յաջողութիւնները արգասիքն են ոչ միայն անհատի տքնաջան աշխատանքի, այլեւ դպրոցների, ընտանիքների ու ազգային մարմինների կատարած գործունէութեան ու ներդրումների, շնորհակալական խօսք ուղղեց դրանց իրականացման գործում բոլոր դերակատարներին:



Իր սրտի խօսքն ասաց Կրթական խորհրդի երիտասարդ անդամուհի Արինէ Մինասեանը, ով պետական համալսարանի անգլերէն լեզւի գրականութեան ճիւղն աւարտել է գեր-լիսանսի մակարդակով: Նա իր ուսանողական վեց տարիների հետաքրքիր յուշերով ու փորձառութիւններով կիսւեց ներկաների հետ, իսկ նորամուտներին խորհուրդ տւեց՝ լինել նպատակասլաց, զինւել զանազան կարողութիւններով եւ կարեւոր դէմք դառնալու փոխարէն օգտակար հանդիսանալ ցանկացած բնագաւառում:

Այնուհետեւ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի, Պատգամա-

ւորական ժողովի դիւանի անդամ Գեղարդ Մանսուրեանի, Սպահանի հայոց թեմի Թեմական եւ Կրթական խորհուրդների ատենապետեր՝ Վարուժ Մինասեանի ու Մարգարիտ Դաւթեանի ձեռամբ ուսանողներն առանձնաբար ստացան իրենց գնահատագրերն ու նուէրները:



Միջոցառումը եզրափակեց թեմակալ առաջնորդ Հայր Սուրբի հայրական խօսքով, ով իր սրտի ուրախութիւնը յայտնեց՝ նման մեծաթիւ երիտասարդ-ուհիների համալսարան մուտք գործելու առթիւ: Գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը գնահատեց երեկոյի ելոյթները՝ ի մասնաւորի Կրթական խորհրդի երիտասարդ անդամուհու արտայայտութիւնները, ապա կրթական մշակներին եւ ազգայիններին ուսկեայ կողմնացոյց համարելով, ուսանողներին խորհուրդ տուեց կեանքի լաւագոյն ու ճշգրիտ ուղղութիւններն ստանալ հենց այս ոսկեայ կողմնացոյցերից: Նա աւարտին երիտասարդներին յորդորեց ապագայում ընտրել այնպիսի ծառայութիւններ, որոնց համար աշխարհն իրենց կը դիմաւորի հզօրագոյն ծափողջոյններով:

Երեկոյի աւարտին երկու տարեշրջանների նորամուտներն առանձնաբար լուսնակարուեցին:





## ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ 39-ԱՄԵԱԿ

Այս տարի լրանում է Իրանի Իսլամական յեղափոխութեան 39-ամեակը:

Այս առթիւ փետրուարի 1-ի առաւօտեան 9:33-ին (իրանական 12 բահման), որը համընկնում է Իսլամական Յեղափոխութեան հիմնադիր այաթոլլահ Խոմէյնիի Իրան վերադարձին, ղօղանջեցին Նոր Ջուղայի բոլոր եկեղեցիների զանգերը՝ մեկնարկելով Այգաբացի տասնօրեակի տօնակատարութիւնները:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳ. ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆՈՒՄ ՊԱՐՏԱԴՐԵԱԼ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՅՈՒՇԱՔԱՐ ԿԱՆԳՆԵՑՒԵՑ



Իրանի Իսլ. յեղափոխութեան յաղթանակի 39-րդ տարեդարձի առթիւ, ուրբաթ՝ փետրուարի 9-ի առաւօտեան, Նոր Ջուղայի հայոց ազգ. գերեզմանատանը, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի միջոցով եւ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի ու եկեղեցական դասի մասնակցութեամբ, տեղի ունեցաւ Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի ընթացքում զոհուած հայ նահատակների յիշատակը յաւերժացնող յուշաքարի բացման եւ օրհնութեան արարողութիւնները: Ծրագրում իրականացւեց նաեւ հոգեհանգստեան կարգ՝ սոյն պատերազմի հայ նահատակների յիշատակին: Յուշաքարը տեղադրուել է Թեմական խորհրդի նախաձեռնութեամբ:



Սկզբում հնչեց Իրանի Իսլ. Հանրապետութեան օրհներգը, ապա յուշաքարի բացումը կատարեց ծաղկեպսակի մատուցմամբ՝ մասնակցութեամբ՝ թեմակալ առաջնորդի եւ Պատգամաւորական Ժողովի, Թեմական ու Կրօնական խորհուրդների ատենապետներ Թաթուլ Օհանեանի, Վարուժ Մինասեանի եւ Վարուժ Մովսիսեանի:

Յաջորդիւ իրականացեցին սոյն կոթողի օրհնութեան եւ նահատակների հոգեհանգստեան հոգեզմայլ արարողութիւնները, որից յետոյ իր սրտի խօսքն արտայայտեց Սպահան նահանգի Նահատակների հիմնարկի տնօրէն պրն. Վաքիլին: Նա իր խօսքում դրւատանքի խօսք ասելով հայ նահատակների կատարած հերոսութիւնների ու անձնազոհութիւնների առթիւ՝ Նահատակների հիմնարկի տնօրինութեան եւ Սպահանի նահանգապետի անունից շնորհակալական խօսք ուղղեց ազգային մարմիններին՝ նման յուշաքար կանգնեցնելու գեղեցիկ մտայղացման համար, ընդգծելով, որ համանման նախաձեռնութիւնների շնորհիւ յաւերժանալու է հայրենիքի պաշտպանութեան եւ անվտանգութեան ճանապարհին ընկած նահատակ հայորդիների յիշատակն ու սխրագործութիւնները:

Ասմունքով եւ աշակերտական խօսքերով հանդէս եկան «Քանանեան» եւ «Կատարինեան» միջնակարգ դպրոցների սաներ՝ Ռենիա Մինասեանը, Արթուր Քամարզարեանը եւ Լիլիթա Յովսէփեանը, այնուհետեւ նահատակների ընտանիքներին յուշանւէրներ շնորհեցին ձեռամբ՝ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի, պրն. Վաքիլիի, թեմի Պատգամաւորական ժողովի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետների ու շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ Վահէ Թորոսեանի:



Վերջում ներկաները խունկ ծխեցին կենտրոնական յուշաքարի երկու կողմերում տեղադրւած Պարտադրեալ պատերազմում զոհւած թեմիս վեց զաւակների յուշաքարերի առջեւ, որոնք են նահատակներ՝ Վրէժ Բաղումեանը, Մկրտիչ Թումասեանը, Հրաչ Յակոբեանը, Ռայմոնդ Բաղրամեանը (Խաթուն-Նեժադ), Վարդան Աբրահամեանը եւ Հենրիկ Տէր-Յովհաննիսեանը:



Միջոցառմանը ներկայ էին անձնութագների գծով Սպահանի նահանգապետի խորհրդական դոկտ. Եազդին, պետական պաշտօնատարներ, Իրանի կրօնական փոքրամասնութիւնների ներկայացուցիչները, հայ նահատակների ընտանիքները, ազգային մարմինների ներկայացուցիչները, «Քանանեան» եւ «Կատարինեան» միջնակարգ դպրոցների աշակերտութիւնն ու պատասխանատուները եւ հայ ու պարսիկ հայրենակիցներ: Ծրագիրը վարեց Թովմա Գալստանեանը:

Կարգի ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը, իսկ Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Սկաուտական միաւորի անդամները հսկման կարգ կատարեցին յուշաքարի շուրջ:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ ՆՇՒԵՑ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳՆԵՐԻ ՏՕՆԸ

Ս. Ստեփանոս Նախավկայի, հայ եկեղեցու սարկաւագների, ինչու չէ նաեւ Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս եկեղեցու անւանակոչութեան տօների առթիւ, երկուշաբթի՝ 2017 թւականի դեկտեմբերի 25-ի առաւօտեան, Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում, ս. եւ անմահ պատարագ մատուցեց Չահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գունճանեանի ձեռամբ ու քահանայից եւ սարկաւագաց դասերի մասնակցութեամբ:

Հոգեպարար արարողութեան երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

Տօնին պատշաճ քարոզը տուեց պատարագիչ Հայր Սուրբի միջոցով: Նա իր խօսքում անդրադառնալով հայ եկեղեցու կարեւորագոյն մրատիրոսներից, նահատակութեան եւ ծառայութեան խորհրդանիշ Ս. Ստեփանոսի կեանքին, ով յայտնի է յատկապէս իր աստուածատուր կամքի հզօրութեամբ, աւելացրեց, որ Ս. Ստեփանոսի նահատակութիւնը հեռու անցեալում կատարուած լինելով հանդերձ, համարւում է ժամանակակից, քանի որ այն կարողանում է մեզ լիցքաւորել Սրբի կամքով ու հաւատքով:



Քարոզիչ Հայր Սուրբն աւելացրեց նաեւ, որ Հայ եկեղեցին Ս. Ստեփանոս տօնի նշումով ոչ միայն փառաբանում է նրան, այլեւ Սրբի օրինակը վառ պահելով կամք եւ հաւատ է ներշնչում բոլորին: Գերպ. Տ. Անանիա ծ. ծրդ. Գուճանեանն իր քարոզի աւարտին տօնը պատեհ առիթ համարելով՝ պատգամեց, թէ մերօրեայ դժւարին պայմաններում հայ հոգեւորականների կարեւորագոյն կոչումն ու առաքելութիւնը պէտք է լինի միայն հայ եկեղեցուն եւ ազգին ծառայելը:

Պատարագի աւարտին Ս. Ստեփանոսի աջով տեղի ունեցաւ Ջրօրհնէքի արարողութիւնը:

Այնուհետեւ Նոր Ջուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեան կազմակերպութեամբ եւ եկեղեցու Տիկնանց յանձնախմբի համագործակցութեամբ շրջափակում իրականացւեց ընդունելութիւն, ուր տօնի առթիւ շնորհաւորանքի խօսքով ու մաղթանքներով հանդէս եկաւ Եկեղեցեաց վարչութեան անդամուհի Լիդա Սիմոնեանը, իսկ ընթացքում ասմունքեց Վանէ Ծահնազարեանը, «Նարեկ»-ից հատուածներ ընթերցեց Ալւարդ Ջարգարեանը եւ երգի կատարմամբ ելոյթ ունեցան բարեշնորհ սարկաւագներ՝ Հրաչ Մինասեանն ու Արա Բաղումեանը: Միջոցառման աւարտին իր հայրական օրհնանքը փոխանցեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, որտեղ առիթի կապակցութեամբ շնորհաւորեց բոլորին ի մասնաւորի՝ սարկաւագներին եւ շնորհակալական խօսք ուղղեց արարողութեան ու ընդունելութեան կազմակերպիչներին ու դերակատարներին:

Միջոցառումը վարեց Վեհանուշ Խուդաբախշեանը:

## 2018 ԹՒԱԿԱՆԻ ԱՄԱՆՈՐԵԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

2018 թւականի յունւարի 1-ին, ժամը 00:45-ին, Ս. Ամենափրկչեան վանքի ,Ս. Յովսէփ Արիմաթացիե եկեղեցում, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի միջոցով, Ծահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի ու թեմի եկեղեցական դասի մասնակցութեամբ եւ հոծ թւով հաւատացեալների ներկայութեամբ, Գոհաբանական աղօթք մատուցւեց՝ Ամանորի առթիւ:



Արարողութեան աւարտին առաջնորդ Հայր Սուրբը շնորհաւորելով Նոր տարւայ կապակցութեամբ՝ իր տօնական բարեմաղթանքներն ուղղեց բոլորին, ապա առ Աստուած բարձրացրած իր աղօթքում ցանկացաւ՝ աշխարհում, ի մասնաւորի մեր հայրենիքում, տիրի խաղաղութիւն, իսկ հայ ժողովրդի համար խնդրեց՝ առողջութիւն, յաջողութիւն եւ իղձերի իրականացում:



Այնուհետեւ վանքի բակում բազմահարիւր հայորդիների ներկայութեամբ, տօնական երաժշտութեան ներքոյ տեղի ունեցաւ հրավառութիւն եւ հիւրասիրութիւն, որի ընթացքում բոլորն առիթ ունեցան տօնը միմեանց շնորհաւորելու եւ բարեմաղթանքներ կատարելու:

Յունուարի 1-ի առաւօտեան ժամը 10:30-ին, Ամանորի առթիւ սուրբ եւ անմահ պատարագ մատուցւեց դարձեալ ,Ս. Յովսէփ Արիմաթացիե եկեղեցում: Օրւայ պատարագիչն էր գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը. ներկայ էին նաեւ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գունճանեանը, եկեղեցական դասը եւ հաւատաւոր հայորդիներ: Երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը:



Որպէս օրւայ քարոզ՝ պատարագիչ Հայր Սուրբն ընթերցեց «Նոր մարդ լինենք» խորագրով իր Ամանորեայ պատգամը, ուր նշւած էր, թէ յաջողութիւնը կեանքի օրակարգերի իրագործումների մէջ չէ, այլ փոփոխութեան մէջ. մի փոփոխութիւն, որն սկսւում է ներաշխարհից եւ կարելի է այն կոչել նորոգում: Նա իր խօսքի մի այլ բաժնում ընդգծելով, որ 2017 թւականը «Վերանորոգման տարի» հռչակւեց, քանի որ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետը այդ ահազանգը հնչեցնելու ժամանակը հասած համարեց, ասաց. «Յստակեցման համար, թոյլ տւէք, որ ճշտենք նորոգման իսկական ուղին կամ գործընթացը. Քրիստոնէական նորոգումը մեր ներաշխարհի՝ պարզապէս պակասը ամբողջացնել, թերին լրացնել, ծուռը շտկել կամ պարբերաբար ու պատահական նորոգում չէ, ոչ էլ տեւական նորոգում, այլ նրա ճշգրիտ գործընթացը նախ գիտակցելն է, ապա զղջալը, ապաշխարելը, Աստծուն դառնալը, խոստովանելն ու ինքն իրեն Աստծուն յանձնելն է: Սա է, որ թելադրում եւ ուսուցանում է մեզ Աստուածաշունչը, եւ սա է մեր գլխաւոր կոչումն ու պարտականութիւնը, որպէս ներկայ դարի այս ալեկոծեալ աշխարհում ապրող հայազգի քրիստոնեաներ»:

Ս. պատարագի ընթացքում ներկաները տարւայ առաջին ս. հաղորդութիւնն ստացան գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանից, ապա վանքի դահլիճում Հայր Սուրբն ընդունեց ժողովրդի Ամանորեայ շնորհաւորանքները: Այս շրջագծում ընթերցւեց Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախմբի շնորհաւորանքի խօսքը, որից յետոյ շնորհաւորանքներով ու բարեմաղթանքներով, ինչու չէ նաեւ ազգային մարմինների ու հաստատութիւններին ուղղւած դրւատանքի խօսքերով հանդէս եկաւ թեմակալ առաջնորդը:

## ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԵՐԸ ՆՇՈՒԵՑԻՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօների նախատօնակի՝ Ճրագալոյցի ս. պատարագը մատուցւեց Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս, Ս. Նիկողայոս, Ս. Ներսէս եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիներում, ուրբաթ՝ 2018 թւականի յունուարի 5-ի երեկոյեան ժամը 5:00-ին:



Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը նախագահեց Ս. Ստեփանոս եկեղեցու ս. պատարագին, որը մատուցւեց արժ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանի միջնորդով:

Ընթացքում Հայր Սուրբն ընթերցեց ս. Ծննդեան տօնի առիթով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի «Մարդը՝ Աստծու որդու մարդեղութեան նպատակը» խորագրով պատգամը:

Ծնորհազարդ Հայրապետն իր պատգամում նշելով, որ քրիստոնէական մտածողութեան մէջ, քիստոսաբանութիւնը եւ մարդաբանութիւնը անքակտելիօրէն իրար հետ առնչւած են եւ մարդը արժէք է Աստծու համար՝ որպէս ստեղծագործութեան պահապան ու պաշտպան, ընդգծել էր. «Քրիստոսի ծնունդը մի հրաւէր է, վերանորոգւելու Բեթղեհէմի խորհրդով: Քրիստոսի ծնունդը մի յիշեցում է փրկութեան ճանապարհի վրայ գտնւող մարդուն՝ հաւատարմօրէն հետեւելու Քրիստոսին: Քրիստոսի ծնունդը մի կոչ է, մասնակից դառնալու, եկեղեցու ճամբով իրագործւող, փրկագործական առաքելութեանը: Այս գիտակից հաւատով մօտենանք Քրիստոսի ծնունդին ու հաղորդւենք նրա

խորհրդով ու պատգամով»:

Հոգեպարար արարողութիւնն աւարտեց Քրիստոսի ս. Ծննդը հռչակող շարականի «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» աւետաբեր բառերով:



Յաջորդ օրը՝ շաբաթ, յունուարի 6-ի առաւօտեան ժամը 10:00-ին, ս. Ծննդեան տօնի պատարագը մատուցւեց Նոր Ջուղայի Ս. Բեթղեհէմ, Ս. Յովհաննու, Ս. Մինասի եւ Ս. Ստեփանոս եկեղեցիներում: Ս. Բեթղեհէմ եկեղեցու պատարագը կատարեց թեմակալ առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը. մասնակցում էին նաեւ արժ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանն ու սարկաւագաց դասը:

Քարոզի պահին, հաւատաւոր հայորդիներին իր հայրական խօսքը փոխանցեց պատարագիչ Հայր Սուրբը, ուր անդրադառնալով, որ այսօրուայ մատաղ սերունդը ազգի ապագայի ղեկավարն ու ճակատագրի որոշիչն է լինելու եւ յատկապէս ընդգծելով, թէ հայ ընտանիքները հայութեան կենդանի ու կենսատու բջիջներն են, կոչ արեց. «Յիսուս Քրիստոսի Ծննդեան տօնն իր մէջ սրբացնում եւ իւրացնում է ընտանիք կազմելու, բայց մանաւանդ որդեծննդեան գաղափարն ու իդէալը: Ուստի, Ս. Ծննդեան այս տօնի առիթով, եկէք ազգովի վերադառնանք մեր աւանդական ու պայենական կենցաղակերպին, փոխենք մեր մտածումը, հոգեբանութիւնն ու հասկացողութիւնը, եւ փորձենք լինել բազմանդամ ու բազմազաւակ ընտանիքներ, այնքան՝ որքան իւրաքանչիւրիս պարագաներն ու կարողութիւնները կը ներեն, որպէսզի մեր այսօրուայ բազմածին երեխաները դառնան մեր ազգի փայլուն, պայծառ ու հզօր ապագայի երաշխիքն ու կուանը»:

Հայր Սուրբի ս. Ծննդեան տօնի պատգամն ընթերցւեց միւս եկեղեցիներում՝ պատարագիչ հայրերի միջոցով:

Արարողութիւնից յետոյ տեղի ունեցաւ Ջրօրհնէքի կարգը, որտեղ աղօթքների եւ շարականների հնչման ներքոյ Հայր Սուրբի ձեռամբ ս. Միւռոնի հեղումով օրհնուեց եւ սրբագործուեց ջուրը:



Նոյն օրը, կէսօրից յետոյ, Ջրօրհնէքի արարողութիւն տեղի ունեցաւ նաեւ Նոր Ջուղայի Ս. Սարգիս եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիներում, իսկ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի միջոցով ու Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի ու եկեղեցական դասի մասնակցութեամբ, երեկոյեան ժամը 5:30-ին, Ջրօրհնէքի կարգ կատարւեց առաջնորդանիստ Ս. Ամենափրկիչ վանքի «Ս. Յովսէփ Արիմաթացիե» եկեղեցում, որից յետոյ վանքի Ծաղկեայ դահլիճում թեմակալ առաջնորդն ընդունեց ս. Ծննդեան տօնի առթիւ շնորհաւորանքները:

Բոլոր արարողութիւններին ներկայ էին հոծ թւով հաւատացեալներ:

Ս. Ստեփանոս եկեղեցում մատուցւած Ճրագալոյցի եւ Ս. Բեթղեհէմ եկեղեցում կատարւած ս. Ծննդեան տօնի զոյգ պատարագների ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ Արմէն Ամիրխանեանի ղեկավարութեամբ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ



Երկուշաբթի՝ 2018 թւականի յունուարի 15-ին, Նոր Ջուղայի ,Ս. Յովհաննու եկեղեցում, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի նախագահութեամբ ս. եւ անմահ պատարագ մատուցւեց՝ Ս. Յովհաննէս Կարապետի ծննդեան տօնի առթիւ, որը միեւնոյն ժամանակ նշւած եկեղեցու անւանակոչութեան տօնն էր:

Պատարագը մատուցեց եկեղեցու ծխատէր քահանայ հայր արժ. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը.

ներկայ էին նաեւ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գունճանեանը, եկեղեցական դասը եւ հաւատացեալ ժողովուրդ: Երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

Յընթացս ս. պատարագի առաջնորդ Հայր Սուրբի միջոցով ընթերցւեց Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ Հայաստանի Հանրապետութեան հռչակման 100-ամեակի առթիւ, ուր շնորհազարդ Հայրապետը կոչ էր արել՝ թեմերին, Հանրապետական մաղթանքի կատարումով, հրապարակային հանդիսութիւններով եւ այլազան ծրագրերի իրագործումով, հանդիսաւոր կերպով նշել մեր ժամանակակից պատմութեան այս կարեւոր թւականը, հայկական կազմակերպութիւններին՝ միասնական ոգով, ժողովրդական լայն մասնակցութեամբ ու զանազան ձեռնարկների ճանապարհով, արժեւորել հայ կեանքում պատմական այս դէպքը, հայկական կրթական կառոյցներին՝ յատուկ կարեւորութեամբ շեշտել անկախութեան իմաստը՝ որպէս մեր հայրենիքի հզօրութեան ու ազգի յաւերժութեան ամուր հիմքը, հայ մտաւորականներին՝ աշխատասիրութիւնների ու դասախօսութիւնների ճանապարհով վերլուծել եւ վերարժեւորել առաջին Հանրապետութեան դերը՝ Հայաստանի եւ Սփիւռքի մէջ, անկախութեան ոգու եւ տեսլականի արծարծ պահելու եւ Հայաստանի երկրորդ անկախութեան ստեղծման գործում, իսկ հայ ժողովրդի զաւակներին՝ կարդալով, լսելով ու զանազան ձեռնարկներին մասնակցելով, լայն ծանօթութիւն ունենալ Հայաստանի առաջին Հանրապետութեան մասին եւ անդրադառնալ անկախութեան եզակի կարեւորութեանը՝ մեր ժողովրդի կեանքում:



Ս. պատարգի աւարտին տեղի ունեցաւ ջրօրհնէք, որից յետոյ հաւատացեալները համախմբւեցին եկեղեցու բակում եւ վայելեցին նախատեսուած գեղարւեստական յայտագրով ծրագիրը: Միջոցառումը վարեց նոյն եկեղեցու երեցփոխ Մառիթա Կարապետեանը, իսկ ընթացքում երգերով եւ ասմունքներով հանդէս եկան Մառինա Առաքելեանը, Ռիթա Մկրտչեանը, Ռիմա Մարկոսեանը, Ջանի սրկ. Ղազարեանն ու Էրիկ եւ Իւրիկ Եղսանեանները:



Վերջում Ս. Յովհաննու Կարապետի տօնի առթիւ իրենց շնորհաւորանքի խօսքը փոխանցեցին գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանն ու արժ. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը:








## ՋՐՕՐՀՆԷՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ՝ ՂԱՐՂՈՒՆ ԳԻՒՂՈՒՄ

Փերիոյ գաւառի Ղարղուն գիւղի Ս. Նշան եկեղեցու վարչութեան նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ, ուրբաթ՝ 2018 թւականի յունուարի 19-ի առաւօտեան, ձեռամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի եւ մասնակցութեամբ արժ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանի ու սարկաւագների, նոյն եկեղեցում իրականացւեց Ջրօրհնէքի արարողութիւն:

Հոգեպարար կարգին ներկայ էին թեմիս Կրօնական խորհրդի անդամներ՝ ատենապետ Վարուժ Մովսիսեանը եւ Սաքօ Տէր-Յովհաննիսեանը, Ս. Նշան եկեղեցու վարչութիւնը եւ Նոր Ջուղայից ու Շահինշահրից, ինչու չէ նաեւ Փերիոյ գաւառի զանազան գիւղերից ժամանած հաւատացեալ ժողովուրդ:

Արարողութեան ընթացքում նախքան եզրափակիչ «Տէրունական աղօթքը», քարոզեց թեմակալ առաջնորդ Հայր Սուրբը: Նա անդրադառնալով օրւայ խորհրդին եւ յատկապէս բնաբան ունենալով 29-րդ սաղմոսի 3-րդ համարը՝ «Ձայն Տեառն ի վերայ ջուրց…»-ը, որն արտասանւում է Ջրօրհնէքի

արարողութեան սկիզբը, կարեւորութեամբ ընդգծեց, թէ այս հատուածը մեզ յիշեցնում է, որ Աստուած ամէն բանից առաջ գոյութիւն ունեցող հզօրագոյն ուժն է եղել եւ նա է տիեզերքի ստեղծիչն ու արարիչը, Տիրոջ պատուիրաններին ուշադրութիւն չդարձնելու պարագային ենթարկւելու ենք աստուածային պատուհասի, իսկ լինելով նրա հաւատարիմ զաւակները, կեանքը շարունակելու ենք դրախտային վայրում, ուր ջրառատ է եւ Աստուած մշտապէս ներկայութիւն ունի:



Գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանն իր խօսքի մի այլ բաժնում անդրադառնալով նաեւ, որ եկեղեցու մէջ օրհնւող ջուրը բաժանւում է հաւատացեալներին՝ որպէս բուժիչ դեղ եւ զանազան բարիքների խորհրդանիշ, կոչ արեց ներկաներին՝ լսելով աստուածային պատուիրանները, լինել Տիրոջ հաւատարիմ զաւակները եւ չհետեւել չարին:



Յատկանշական է, որ թեմակալ առաջնորդն ու նրան ընկերակցող Կրօնական խորհրդի անդամները, նոյն օրը ժամանեցին նաեւ Խոյգան գիւղ, ուր սկզբում աղօթեցին Ս. Աստուածածին եկեղեցում, ապա այցելելով գիւղի Ս. Ներսէս եւ Ս. Յովհաննու եկեղեցիներ՝ մօտիկից ականատեսը եղան այս երկու սրբավայրերում իրականացուած նորոգութեան աշխատանքներին, որը կատարւել է Ֆեռէյդունշահրի Մշակութային ժառանգութեան, ձեռարուեստի եւ զբօսաշրջութեան կազմակերպութեան միջոցով:

## Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐԻ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ս. Սարգիս զօրավարի տօնի առթիւ հոծ թւով հաւատացեալների մասնակցութեամբ հոգեզմայլ արարողութիւններ իրականացուեցին Նոր Ջուղայի Ս. Սարգիս եկեղեցում, ուր միեւնոյն ժամանակ տօնւեց նաեւ նշւած եկեղեցու անւանակոչութեան տօնը:



Երկօրեայ արարողութիւնների մեկնարկը տուեց ուրբաթ՝ յունւարի 26-ի կէսօրից յետոյ ժամը 3:00-ին, եկեղեցու շրջափակում, որտեղ ձեռամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի եւ մասնակցութեամբ եկեղեցական դասի տեղի ունեցաւ աղօթքների կարգը եւ ոչխարների զենման արարողութիւնը: Այնուհետեւ նոյն օրը երեկոյեան ժամը 6:00-ին, եկեղեցում, դարձեալ առաջնորդ Հայր Սուրբի միջոցով եւ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի ու եկեղեցական դասի մասնակցութեամբ իրականացւեց հսկման արարողութիւնը:



Հոգեպարար արարողութեան աւարտին Իրանի Իսլ. Հանրապետութեան զինւած ուժերում ծառայող թեմիս 16 զաւակները մասնակցելով զինւորների օրհնութեան յուզիչ կարգին՝ Հայր Սուրբերի միջոցով ստացան Աստծոյ օրհնութիւնը: Ս. Սարգիս զօրավարի տօնի առթիւ իրականացւող այս կարգը հիմք է դրւել նախորդ տարւանից՝ թեմիս Կրօնական խորհրդի գեղեցիկ մտայղացմամբ:

Այնուհետեւ բոլորը համախմբուեցին եկեղեցու բակում, ուր իր հայրական պատգամը փոխանցեց գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը: Հայր Սուրբն սկզբում իր հպարտութեան զգացումը յայտնեց, առ այն, որ թեմիս զաւակները ծառայելով Իրանի Իսլամական Հանրապետութեան բանակում լաւագոյն կերպով ներկայացնում են հայ երիտասարդի ինքնութիւնն ու նկարագիրը: Նա իր խօսքի մի այլ բաժնում ընդգծելով, որ հայ զինուորը միւսներից տարբերւում է իր պատասխանատուութեան զգացումով, անձնուիրութեամբ եւ դաստիարակութեամբ, աւելացրեց, թէ ճիշտ է, որ մեր թեմի զաւակները այսօր առիթը չունեն Արցախում ծառայելու, սակայն իրենց հաւատով ու ներկայութեամբ ուժ են տալիս Արցախի սահմանները պաշտպանող իրենց եղբայրներին:

Օրուայ առթիւ արտայայտուեց նաեւ Կրօնական խորհրդի ատենապետ Վարուժ Մովսիսեանը, ով երկօրեայ արարողութիւնների կազմակերպման գործը լաւագոյնս իրականացնելու համար՝ շնորհակալական խօսք ուղղեց՝ Նոր Ջուղայի Հայոց Առաքելական եկեղեցեաց վարչութեանը, եկեղեցու երեցփոխներին եւ Տիկնանց ու Հարիսայի պատրաստման յանձնախմբերին. նա իր խօսքը եզրափակեց հայ զինուորների համար բարի եւ անփորձանք ծառայութիւն ցանկանալով:

Միջոցառման շարունակութեան մէջ Կրօնական խորհրդի կողմից նախատեսուած նւէրները զինուորներին շնորհուեցին՝ ձեռամբ զոյգ Հայր Սուրբերի, ինչու չէ նաեւ թեմի Պատգամաւորական ժողովի Դիւանի, Կրօնական խորհրդի, շրջանի Հայ Դատի յանձնախմբի եւ Ն. Ջ. եկեղեցեաց վարչութեան ներկայացուցիչների: Պարգեւատրուեց նաեւ Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմին մասնակից անձնուրաց-ազատորդի եւ Նոր Ջուղայի Հայոց Առաքելական եկեղեցեաց վարչութեան անդամ Սուրէն Յակոբեանը:

Վերջում տեղի ունեցաւ ընդունելութիւն, որից յետոյ առաջնորդ Հայր Սուրբն այցելեց եկեղեցու շրջափակում հարիսայի պատրաստման համար նախատեսուած վայր, ուր մօտիկից ծանօթանալով կատարուած աշխատանքներին՝ գնահատանքի խօսք ուղղեց պատկան յանձնախմբին:

Շաբաթ՝ յունուարի 27-ին, տօնի առթիւ ս. եւ անմահ պատարագ մատուցեց գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի ձեռամբ: Պատարագին ներկայ էին Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը եւ թեմիս եկեղեցական դասը. երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը, Արմէն Ամիրխանեանի ղեկավարութեամբ:



Ժողովրդից բացի՝ պատարագին ներկայ էին նաեւ ազգային մարմինների ներկայացուցիչները եւ հայոց ազգ. «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի 6-րդ դասարանի աշակերտ-ուհիները՝ իրենց ուսուցչի եւ ծնողական խորհրդի ներկայացուցիչների ընկերակցութեամբ:

Ընթացքում յաւուր պատշաճի քարոզեց պատարագիչ Հայր Սուրբը, ուր ակնարկ ունեցաւ Սրբի կեանքին, հաւատին ու կատարած սխրագործութիւններին:

Թեմակալ առաջնորդն ասաց. «Ս. Սարգիս զօրավարը եղել է նաեւ Աստծու խօսքի հիանալի ու անվախ քարոզիչ: Նա հանգիստ ու խաղաղ օրերին՝ իր շրջապատին, իսկ պատերազմի ու օրհասական ժամերին՝ բանակին քարոզելով, կարողացել է իր քրիստոնէական հաւատը տարածել թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով... Ս. Սարգիս զօրավարի տօնը պատեհ առիթ դարձնելով եւ օրինակելով Սրբին, պէտք է ընդմիշտ մտածել Աստծու մասին եւ ազատ ժամանակները տրամադրել Աստծու փառքին ու կամքին՝ նրա ողորմութեանն ու օրհնութեանն արժանանալու համար»:



Վերջում Ս. Սարգիս զօրավարի աջով կատարուեց ջրօրհնէքի արարողութիւն, ապա բոլորը համախմբուեցին եկեղեցու բակում, ուր օրհնուեց նաեւ պատրաստուած հարիսան եւ բաժանուեց ժողովրդին:

Յատկանշական է, որ վերոնշեալ արարողութիւնների ընթացքում ուխտաւորները իրենց խորհուրդը կատարել էին նւիրատուութիւններով ու մատաղներով:

# ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԵՐԻ ՆՇՈՒՄԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Երեքշաբթի՝ փետրուարի 6-ին, սրբոց Ղեւոնդեանց քահանաների տօնի առթիւ սուրբ եւ անմահ պատարագ մատուցւեց Նոր Ջուղայի «Ս. Մինաս» եկեղեցում՝ նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի: Օրուայ պատարագիչն էր Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը: Հոգեզմայլ պատարագին մասնակցում էին թեմիս քահանայից ու դպրաց դասերը: Ներկայ էին նաեւ ազգային մարմինների ներկայացուցիչներն ու ժողովուրդ:

Պատարագիչ Հայր Սուրբն օրուայ առթիւ իր պատգամում նշելով, թէ ինչպէս Վարդանանց



պատերազմից առաջ Ղեւոնդ Երէցն իր քարոզով Աստծոյ շունչը փոխանցեց հաւատի ճամբին պատերազմողներին, աւելացրեց, որ մեր եկեղեցին չենք կարող բաժանել հոգեւոր եւ ազգային իմաստների, քանի որ Ղեւոնդ Երէցն ու իր հետեւորդները հոգեւորն ու ազգայինը հաստատեցին՝ որպէս մէկ ամբողջութիւն: Հայր Սուրբն իր խօսքի աւարտին շեշտելով, որ քահանան Աստծոյ սպասաւորն է եւ եկեղեցու պաշտօնեան, իր ուրախութիւնը յայտնեց թեմիս հոգեւորականների եւ ժողովրդի միջեւ յարգանքի, սիրոյ եւ վստահութեան վրայ հիմնուած փոխ-յարաբերութեան համար, ապա շնորհաւորելով առիթի կապակցութեամբ, յոյս յայտնեց, որ թեմիս հոգեւորականներին ինչպէս միշտ տեսնելու ենք ղեւոնդեանց քահանաների հոգով ու նւիրումով:

Ս. պատարագին յաջորդեց եկեղեցու սրահում ընդունելութիւնը, ուր օրուայ առթիւ խօսքերով ու շնորհաւորանքներով հանդէս եկան եկեղեցու երեցփոխուհի Ռիթա Մկրտչեանն ու Նոր Ջուղայի Հայոց Առաքելական եկեղեցեաց վարչութեան անդամուհի Լիդա Սիմոնեանը: Վերջում արտայայտւեց նաեւ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը՝ քահանայից տօնը շնորհաւորելով եւ պատարագի ու միջոցառման գործն ի կատար ածողներին շնորհակալութիւն յայտնելով:

Սրբոց Վարդանանց տօնը նշւեց հինգշաբթի՝ փետրուարի 8-ի առաւօտեան, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի «Ս. Յովսէփ Արիմաթացի» եկեղեցում՝ ս. եւ անմահ պատարագի մատուցմամբ: Պատարագը կատարեց արժ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը՝ եկեղեցական դասի մասնակցութեամբ:



Ժողովրդից բացի ներկայ էին՝ ազգային մարմինների ներկայացուցիչները, «Արմէն» տարրական երկսեռ կրթահամալիրի 5-րդ ու 6-րդ դասարանների եւ «Քանանեան» ու «Կատարինեան» միջնակարգ դպրոցների աշակերտ-աշակերտուհիները եւ պատասխանատուները:

Պատարագիչ քահանայ հայրն օրւան պատշաճ իր քարոզում անդրադառնալով գիտակցաբար մահւանը, ինչու չէ նաեւ Վարդանանց պատերազմին ու այդ հերոսական իրագործումի պատգամին, աւելացրեց, որ այսօր էլ ականատեսն ենք հայրենասէր հայորդիների սխրագործութիւնների, ովքեր իրենց նախնիներից ժառանգած ոգով եւ թանկագին արեան գնով Արցախում պաշտպանում են մեր սուրբ հայրենիքի սահմանները թշնամու ոտնձգութիւններից: Պատարագիչ հայրն ընդգծելով, որ Վարդանանց հերոսներն իրենց մահւամբ կենդանութիւն եւ յաւերժութիւն պարգեւեցին Հայաստանին ու հայ ժողովրդին, կոչ արեց յատկապէս նոր սերնդին՝ օրինակ վերցնելով նրանցից, եկեղեցին, ազգն ու հայրենիքը վեր դասել ցանկացած բանից:

Զոյգ պատարագների երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

# ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՆԱԽԱՏՕՆԱԿԻ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՆՇՈՒՄԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ



Հոգեպարար արարողութեան մատուցմամբ Տեառնընդառաջի նախատօնակը նշուեց Նոր Ջուղայի «Ս. Մինաս», «Ս. Գրիգոր Լուսաւորիչ», «Ս. Ստեփանոս» եւ «Ս. Յովհաննու Կարապետ» եկեղեցիներում, երեքշաբթի՝ 2018 թուականի փետրուարի 13-ի երեկոյեան:

«Ս. Մինաս» եկեղեցու արարողութիւնն իրականացուեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի ձեռամբ, որին մասնակցում էին նաեւ նոյն եկեղեցու ծխատէր հոգեւորական արժ. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանն ու սարկաւագաց դասի ներկայացուցիչները:

Ներկաներին իր հայրական պատգամը փոխանցեց թեմակալ առաջնորդ Հայր Սուրբը: Նա սկզբում մէջբերումներ կատարեց Քրիստոսի տաճար ընծայման իրադարձութեանն անդրադարձող աւետարանական հատուածներից, ապա ընդգծեց Տեառնընդառաջի արարողութեանն առնչւող գեղեցիկ ծիսական ընթացքը, որտեղ կարգին նախագահող եկեղեցականը, մոմը բարձրացնում է սուրբ խորան, ապա այն ներքեւ իջեցնելով փոխանցում ներկաներին՝ ի նշան մարդկային կեանքում աստուածային լոյսի ներկայութեան: Հայր Սուրբն աւելացնելով, որ այս ծիսական խորհուրդը կատարւում է նաեւ ս. Ծննդեան եւ ս. Յարութեան տօներին նախորդող Ճրագալոյց տօնին, կոչ արեց հաւատացեալներին տեղական աւանդոյթների կողքին, կենդանի ու վառ պահել համազգային ու համահայկական այս խորհուրդը եւ ս. խորանից բերուած լոյսը, մոմերով ու լապտերներով տանել իրենց բնակարաններ:



Նոյն առիթով երեկոյեան ժամը 7:00-ին, նախաձեռնութեամբ Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի ու կազմակերպութեամբ Նոր Ջուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեան, Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան շրջափակում տեղի ունեցան երկու առանձին միջոցառումներ: Սկզբում կատարուեց ժողովրդական տօնախմբութիւն, ուր գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի ու նորապսակ զոյգերի միջոցով բոցավառուեց աւանդական խարոյկը, ապա միութեան սրահում տեղի ունեցաւ աւանդոյթ դարձած հաճելի եւ մտերմիկ մթնոլորտի ներքոյ հանդիպումը՝ մասնակցութեամբ՝ թեմակալ առաջնորդի, քահանայից դասի, ազգային մարմինների ներկայացուցիչների, ինչու չէ նաեւ անցնող մէկ տարուայ ընթացքում Նոր Ջուղայում եւ Շահինշահրում նորածիններով համալրուած ընտանիքների ու նորապսակ զոյգերի:





Հանդիպման հիւրերին բարի գալուստ մաղթեց հանդիսավար Մանիա Ղուկասեանը, որից յետոյ օրուայ առթիւ արտայայտուեց Նոր Ջուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեան նախագահ Հենրիկ Յակոբեանը, ով շնորհաւորելով տօնի առթիւ, երջանկութիւն մաղթեց նորապսակներին, իսկ գեղեցիկ մանկութիւն ու պայծառ ապագայ՝ նորածին մանուկներին:





Արտայայտուեց թեմի Կրօնական խորհրդի ատենապետ Վարուժ Մովսիսեանը: Նա իր ուրախութիւնը յայտնելով Տեառնընդառաջի առիթով ձեւաւորուած այս գեղեցիկ աւանդոյթի կապակցութեամբ, շնորհակալական խօսք ուղղեց առաջնորդ Հայր Սուրբին եւ թեմի Պատգամաւորական ժողովին ու Թեմական խորհրդին՝ Կրօնական խորհրդի նախաձեռնութիւնների իրականացման գործում իրենց ցուցաբերած սերտ համագործակցութեան համար:

Ելոյթների շարանում խօսեց նաեւ Պատգամաւորական ժողովի ատենապետ Թաթուլ Օհանեանը, ով կարեւորութեամբ անդրադարձաւ ժողովրդի թուի բարձրացման կարեւոր խնդրին, շեշտելով, որ որեւէ ժողովրդի որակը կախուած է նաեւ նրա քանակից: Պրն. Օհանեանն իր խօսքի շարունակութեան մէջ երիտասարդ զոյգերին խրախուսեց բարձրացնել իրենց զաւակների թիւը, վստահեցնելով, որ թեմի ազգային իշխանութեան կողմից նիւթական օժանդակութիւն է յատկացւելու ֆինանսական ոչ բարենպաստ պայմաններում գտնուող ընտանիքներին՝ իրենց զաւակների ծախսերը հոգալու ուղղութեամբ:





Ծարունակութեան մէջ նախ մանուկների ծնողները, ապա նորապսակ զոյգերը, թեմակալ առաջնորդի ընկերակցութեամբ հատեցին իրենց համար նախատեսուած առանձին տորթերը, ապա նորածիններին նուիրւեցին ոսկէ խաչեր, իսկ նորապսակներին՝ դրամական նուէրներ. իւրաքանչիւրին նուիրւեց նաեւ Ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աստուածային գրքից մի օրինակ՝ աշխարհաբար թարգմանութեամբ:



Վերջում իր հայրական պատգամը փոխանցեց գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը: Նա գնահատելով գովելի միջոցառման նախաձեռնողներին ու կազմակերպիչներին՝ հանդէս եկաւ երեկոյի առթիւ շնորհաւորանքներով ու բարեմաղթանքներով, ապա ընդգծելով ծնող դառնալու բերկրանքը եւ ծնողի առաքելութիւնը, մաղթեց, որ սրահում ներկայ նորապսակ զոյգերին շուտով տեսնելու է նաեւ այդ դերում:

Եկեղեցական արարողութիւններին ու «Արարատ» միութեան տօնախմբութեանը ներկայ էին հոծ թւով ժողովուրդ:

## ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ՝ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Սպահանի հայոց թեմի Քրիստոնէական դաստիարակութեան խորհրդի նախաձեռնութեամբ հինգշաբթի՝ 2018 թւականի փետրուարի 1-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում տեղի ունեցաւ դասախօսական երեկոյ:





Սկզբում բացման խօսքն ընթերցեց երեկոյի հաղորդավար՝ Քրիստոնէական դաստիարակութեան խորհրդի անդամ Թովմա Գալստանեանը: Ահա մի հատւածի մէջբերում սոյն խօսքից.

«Քրիստոնէական դաստիարակութեան խորհուրդն իր գործունէութեան ընթացքում ամենամեայ դրութեամբ տեղ է յատկացրել դասախօսական ձեռնարկներին, որոնք նպատակ ունեն առօրեայի ամենակարեւոր երեւոյթներն ու հարցերն երբեմն յիշեցնել եւ դէպի զգաստութիւն ու արթնութիւն մղել բոլորիս, որպէսզի յանկարծ կամ էլ չզգացւող դանդաղ ընթացքով մեզ չտեսնենք արհաւիրքի ու տագնապի ճահճի մէջ թաղւած»:

Բացման խօսքին յաջորդեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի հայրական պատգամը: Նա նշելով, որ յոյս ունէր սրահում տեսնել աւելի մեծաթիւ երիտասարդների, ընդգծեց, թէ երիտասարդները

վտանգների առջեւ են կանգնում հենց իրենց դրսեւորած անտարբերութեան պատճառով: Հայր Սուրբն, անդրադառնալով նաեւ այն փաստին, որ մեր օրեայ պայմաններում ծնողներից ոմանք հարկ եղած ուղղութիւնները չեն տալիս իրենց զաւակներին, ներկաներին կոչ արեց՝ լաւապէս ունկնդրել երեկոյի ընթացքում հնչող խրատներին ու միջոցներին եւ դրանք տարածել:





Առաջին զեկուցաբերն էր Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, ով իր դասախօսական ելոյթը ծաւալեց «Մարդու կեանքում հոգեւորի անհրաժեշտութիւնը» թեմայի շրջագծում: Նա անդրադառնալով հոգեւոր կեանքի ներքին, արտաքին եւ հաւաքական կարգապահութեանը, ընդգծեց այն դրական կէտերը, որոնք արդիւնքն են Բարձրեալի հետ հաղորդակցելու: Նա իր ելոյթի շրջագծում անդրադարձ ունեցաւ նաեւ հոգեւոր կեանքի բացակայութեան վտանգներին ու աղօթքի կարեւորութեանը:

Յաջորդ ելոյթը դոկտ. Մոհամադ Ռեզա Միրզայիի (էնդոկրինոլոգ-فوق تخصص غدد) դասախօսութիւնն էր՝ «Կանխահաս արբունքի պատճառներն ու վնասները» խորագրով: Այս ծիրում մասնագէտն անդրադարձ ունեցաւ արբունքից առաջացող հոգեկան վիճակին եւ ֆիզիքական փոփոխութիւններին ու կանխահաս արբունքի պատճառներին: Դասախօսը նշեց նաեւ այն բուժումներն ու բժշկական միջամտութիւնները, որոնք կիրառւում են ժամանակից շուտ կամ ուշ արբունքի հասնող անհատների նկատմամբ:

Վերջում դոկտ. Ռամին Ռադֆարը, ով աւելի քան 15 տարուայ փորձառութիւն ունի թմրեցուցիչ նիւթերի մասին ուսումնասիրութեան եւ թմրամոլների բուժման շրջագծում, խօսեց «Թմրամոլութեան դրտապատճառներն ու կանխարգելման միջոցները» թեմայի մասին: Նա իր ելոյթում բացատրեց՝ թմրամոլի բարոյական եւ ֆիզիքական յատկանիշների, թմրանիւթի օգտագործումը կանխարգելելու ուղղութեամբ ընտանիքների դերի եւ հասարակութեան մէջ երիտասարդին սպառնացող վտանգների կապակցութեամբ:



Յատկանշական է, որ իւրաքանչիւր թեմայի աւարտին դասախօսները պատասխանեցին ներկաների յուզող հարցերին:

Երեկոյին ներկայ էին նաեւ քահանայից դասի եւ ազգային մարմինների ներկայացուցիչներ ու ժողովուրդ:

## ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ ՔԱՀԱՆԱՅ ՀԱՅՐԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՍԵՄԻՆԱՐ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ




Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի նախաձեռնութեամբ քահանայ հայրերի վերապատրաստման նպատակով երկօրեայ սեմինար կազմակերպուեց երեքշաբթի եւ չորեքշաբթի՝ 2018 թուականի փետրուարի 27 եւ 28-ին, Նոր Ջուղայի Հայ Դատի յանձնախմբի կենտրոնատեղիի սրահում:

Ծրագրին որպէս ունկնդիր հրաւիրուել էին՝ թեմիս եկեղեցական դասը եւ ազգային մարմինների, եկեղեցիների երեցփոխների ու Տիկնանց յանձնախմբերի եւ Նոր Ջուղայի ու Շահինշահրի Կանանց հոգեւոր լսարանների ներկայացուցիչները:

Ուսուցողական ծրագրով այս երկօրեայ միջոցառումը բացւած յայտարարեց երեքշաբթի՝ երե-

կոյեան ժամը 6:00-ին, Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր եպս. Չիֆթճեանի արտասանած Տէրունական եւ «Զգործս ձեռաց մերոց» աղօթքներով ու Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի հայրական պատգամով: Հայր Սուրբն իր խօսքում ողջունելով ներկաներին եւ գովասանքի խօսք ուղղելով Կրօնական խորհրդին՝ ծրագիրը նախաձեռնելու համար, բացատրութեամբ հանդէս եկաւ սեմինարի շրջագծում արծարծւելիք նիւթերի շուրջ:

Այնուհետեւ որպէս համագումարի առաջին զեկուցաբեր «Հովիւն իր հովւական ծառայութեան դաշտում» նիւթով ելոյթ ունեցաւ գերշ. Տ. Գրիգոր եպս. Չիֆթճեանը, յաջորդիւ «Ժողովրդական նախապաշարումներ, տեղական սովորութիւններ եւ հայկական աւանդութիւններ» թեման ներկայացրեց թեմի Պատգամաւորական ժողովի ատենապետ Թաթուլ Օհանեանը, իսկ երեկոյի վերջին զեկուցաբերը հանդիսացաւ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, ով խօսեց «Քահանայ հօր մտերիմ կապն ու փոխ-յարաբերութիւնը այսօրւայ երիտասարդի հետ» նիւթի կապակցութեամբ:

Առաջին օրւայ ծրագիրն աւարտւեց երեկոյեան ժամը 9:00–ին:

Համագումարն իր աշխատանքը վերսկսեց յաջորդ օրը՝ չորեքշաբթի երեկոյեան ժամը 6:30-ին:

Սկզբում գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանն ներկայացրեց «Ծէսն ու նրա կարեւորութիւնը Հայաստանեայց Առաքելական ս. Եկեղեցում» նիւթը, ապա հոգեբան Սեդա Այւազեանը խօսեց «Քահանայ հօր մարդկային հոգեբանութիւնը» նիւթի մասին, իսկ որպէս վերջին դասախօսութիւն թեմի Քրիստոնէական Դաստիարակութեան խորհրդի անդամ Թովմա Գալստանեանը զեկուցեց «Երիտասարդի այսօրւայ ապրումներն ու ակնկալիքները եկեղեցուց եւ քահանայ հօրից» թեմայի շուրջ:

Զեկոյցների աւարտին նկատի էին առնւել հարցումների եւ քննարկումների բաժինները, որի ընթացքում ներկաներն ստացան իրենց յուզող հարցերի պատասխաններն ու արտայայտեցին թեմաների շրջագծում իրենց տեսակէտները եւ մտահոգութիւնները:



Առաջին օրւայ նիստը ղեկավարեց գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, իսկ երկրորդ օրւանը՝ գերպ. Տ. Անանիա ծ. Վրդ. Գուճանեանը:

Օրակարգի համաձայն սեմինարի աշխատանքն աւարտւեց չորեքշաբթի՝ երեկոյեան ժամը 9:30-ին, որից յետոյ որպէս եզրափակիչ խօսք արտայայտւեցին Կրօնական խորհրդի ատենապետ Վարուժ Մովսիսեանը եւ գերշ. Տ. Գրիգոր եպս. Չիֆթճեանը: Պրն. Մովսիսեանը շնորհակալութիւն յայտնելով զեկուցաբերներին բովանդակալից ելոյթների եւ յատկապէս թեմի եկեղեցական դասին ու միւս ներկաներին իրենց մասնակցութեան համար, դրւատանքի խօսք ուղղեց քահանայ հայրերին, ովքեր ամենայն համբերատարութեամբ ու ջերմեռանդութեամբ իրականացնում են իրենց ծառայողական աշխատանքը:

Գերշ. Տ. Գրիգոր եպս. Չիֆթճեանը ողջունելով Կրօնական խորհրդի գովելի մտայղացումը եւ գնահատելով զեկոյցներն ու տեղի ունեցած քննարկումները, անդրադարձ ունեցաւ երկու օրերի ընթացքում հնչած մտահոգութիւններին եւ յատկապէս երիտասարդների անտարբերութեան առնչութեամբ արծարծւած տեսակէտներին: Նա ընդգծեց, որ ինչպէս ընտանիքի հոգին հանդիսանում է ծնողը, հոգեւորականն էլ համարւում է եկեղեցու հոգին եւ հոգեւորականի վերապատրաստմամբ բնականաբար բարեկարգ է պահւելու եկեղեցին:

Սեմինարը պաշտօնապէս փակւած յայտարարւեց Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով:

## ԱՄԱՆՈՐԻ ԽԱՆԴԱՎԱՌ ՀԵՏՔԵՐԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Նոր Ջուղայի հայոց ազգ. մանկապարտէզ-նախակրթարանի աւանդոյթի վերածւած բեմային ձեռնարկներից՝ ամանորեայ հանդէսը, տեղի ունեցաւ հինգշաբթի՝ դեկտեմբերի 28-ի երեկոյեան, Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում, ուր ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, ազգային մարմինների ու հայոց ազգ. դպրոցների ներկայացուցիչները եւ սաների ծնողներն ու հարազատները:



Մանկական խանդավառութեան եւ աւելի քան մէկ ամիս ջանասիրաբար կատարած նախապատրաստական փորձերի, ինչու չէ նաեւ դպրոցի տնօրինութեան, ուսուցչական կազմի եւ ծնողական խորհրդի իրականացրած ջերմեռանդ աշխատանքի արգասիքը համարուող այս միջոցառումը բացուած յայտարարուեց մանկապարտէզ-նախակրթարանի տնօրինուհի Քառոլին Դիլանչեանի ողջոյնի եւ շնորհաւորանքի խօսքերով ու բարեմաղթանքներով:

Առաջին ներկայացումն իրականացւեց մանկապարտէզի սաների միջոցով, ուր առանձին խմբերի ներքոյ, Անգլիայի, Բրազիլիայի, Ռուսաստանի, Արցախի եւ Հայաստանի ժողովուրդների տարազներով զգեստաւորուած փոքրիկները, պատկան երկրի աւանդական պարերի ներկայացմամբ, ինչու չէ նաեւ աւանդոյթների ու տեսարժան վայրերի մասին ասմունքներով, բացատրեցին Նոր տարին դիմաւորելու իրենց ձեւերը: Խմբերից իւրաքանչիւրը կոչ էր անում Ձմեռ պապիկին 2018 թւականն անցկացնի իր երկրում: Անգլիացիների, բրազիլիացիների եւ ռուսաստանցիների դերերը մարմնաւորեցին մանկապարտէզի Դեղին խմբակի սաները, իսկ որպէս արցախցիներ ու հայաստանցիներ՝ հանդէսին հայկական շունչ հաղորդեցին կրտսեր խմբակի՝ Վարդագոյնի մանուկները: Ներկայացումը եզրափակւեց տօնական երգերի ու արտասանութիւնների խմբական կատարմամբ եւ Ձմեռ պապիկի այցելութեամբ:



Երկրորդ արարի ներքոյ բեմը զարդարեցին նախակրթարանի աշակերտները, ովքեր բեմականացրին «Ցանկութեան ջրհորը»-ը: Երգերի, ասմունքների ու պարային շարժումների մենակատարումներով ողողուած այս բաժնում երեխաները աշխարհահռչակ հեքիաթը մատուցեցին իւրայատուկ կերպով՝ տօնական տարբերակով, որտեղ պատմութեան երեք գլխաւոր հերոսուհիները՝ պարծենկոտ, ծոյլ ու բարեսիրտ քոյրերը եւ չարաճճի ծաղրածուները ցանկութեան ջրհորում բարի էլֆերի օգնութեամբ, ոչ միայն իրականութիւն դարձրին իրենց երազանքներն ու իղձերը, այլեւ գտան բարոյական արժէքներն ու երկար սպասուած Ձմեռ պապիկին: Ընթացքում հնչեցին նաեւ տօնական երգեր՝ խմբական կատարմամբ:

Իւրաքանչիւր ներկայացման աւարտին մանուկները Ձմեռ պապիկից ստացան գեղեցիկ մրգեր:

Խանդավառ երեկոն եզրափակւեց թեմակալ առաջնորդի հայրական օրհնանքով: Գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը մանուկների ելոյթը գնահատեց եւ հրաշալի անուանելով՝ ընդգծեց, որ սաները որպէս ադամանդներ փայլեցին բեմում: Նա իր խօսքի շարունակութեան մէջ նշելով, որ մեզանից խրատներ լսող փոքրիկներն այս հանդէսով իրենք մեզ բարոյական խրատներ տուեցին, աւելացրեց, թէ այսօր մանուկներն իրենց տւած կեանքի ամենագեղեցիկ դասերով բարոյական նւէրներ շնորհեցին մեզ, ինչը շատ կարեւոր եւ անհրաժեշտ է: Առաջնորդ Հայր Սուրբն իր խօսքն աւարտեց բարեմաղթանքներով ու շնորհակալական խօսքով ուղղուած՝ դպրոցի պատասխանատուներին ու աշխատակազմին:



Ամանորն աւելի գունեղ եւ տպաւորիչ դարձնելու նպատակով մանկապարտէզ-նախակրթարանի պատասխանատուների միջոցով կազմակերպւել էին նաեւ այլ միջոցառումներ: Այս ծիրում ուրբաթ՝ դեկտեմբերի 22–ին, Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում տեղի ունեցաւ նկարահանում-դաշտահանդէս, ուր համայնքի անդամները երեկոն վայելեցին զւարճալի խաղերով, համեղ ուտելիքներով ու գեղեցիկ յարդարուած բեմում Ձմեռ պապիկի հետ լուսանկարւելով, իսկ երկուշաբթի՝ դեկտեմբերի 25–ին, դպրոցի շրջափակում իրականացւեց աւանդոյթի վերածւած «Նախօրեակ» կոչւող ջերմ ու մտերմիկ տօնախմբութիւնը, որտեղ սաները պարեցին եւ ուրախացան Ձմեռ պապիկի հետ ու վերջում նւէրներ ստացան նրանից:

## ՍՊԱՀԱՆ ՔԱՂԱՔԻ ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ 3-ՐԴ ՇՐՋԱՆԻ ՏՆՕՐԷՆԻ ԱՅՑԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳ. ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ՝ ՆՈՐ ՏԱՐՒԱՅ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՌԹԻՒ

Սպահան քաղաքի 3-րդ շրջանի Ուսումնա-դաստիարակութեան հիմնարկի տնօրէն Մեհդի Էսմայիլին եւ նրան ընկերակցող պատուիրակութիւնը՝ կազմուած նոյն հիմնարկի բարձրաստիճան պատասխանատուներից ու օգնականներից, չորեքշաբթի՝ 2018 թւականի յունուարի 3-ի առաւօտեան, Նոր տարւայ եւ ս. Ծննդեան տօների առթիւ այցելեցին Նոր Ջուղայի հայոց ազգային կրթահամալիր, որտեղ «Ալենուշ Տէրեան» դահլիճում հանդիպում ունեցան հայմայնքիս հայոց ազգ. դպրոցներ՝ «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի եւ «Քանանեան» աղջկանց ու «Կատարինեան» տղայոց միջնակարգ դպրոցների տնօրինութիւնների ու հայ ուսուցիչների հետ: Հանդիպմանը ներկայ էր նաեւ Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի ատենապետուհի Մարգարիտ Դաւթեանը:



Սկզբում հիւրերին ողջոյնի եւ բարիգալստեան խօսք ուղղեց «Արմէն» կրթահամալիրի տնօրէն Վրէժ Ծիրանեանը՝ իր խօսքում յատկապէս անդրադարձ կատարելով համայնքի հայկական դպրոցների պատմական անցեալին:

Այնուհետեւ հիւրերին ողջունեցին եւ բարիգալստեան խօսք ասացին «Քանանեան» դպրոցի տնօրէններ՝ տկնյք. Սալաոիֆառն ու Կարինէ Մինասեանը եւ «Կատարինեան» դպրոցի տնօրէններ՝ պրն. Մոհսենփուռն ու դոկտ. Վաչիկ Հայրապետեանը: Տնօրէնները իրենց արտայայտութիւնների շրջագծում շնորհակալութիւն յայտնեցին Ուսումնա-դաստիարակութեան հիմնարկին՝ հայոց դպրոցների հետ ցուցաբերած սերտ համագործակցութեան եւ թեմի Կրթական խորհրդին՝ իր անվերապահ աջակցութեան համար:



Ծարունակութեան մէջ իր սրտի խօսքն ասաց նաեւ պրն. Էսմայիլին. նա շնորհաւորանքներ եւ բարեմաղթանքներ փոխանցեց Նոր տարւայ եւ ս. Ծննդեան տօների առթիւ, ապա դրւատանքի խօսք ուղղելով Սպահան քաղաքի հայ համայնքին, կարեւորութեամբ ընդգծեց՝ Իրանում միաստւածեան կրօնների հետեւորդների խաղաղ համակեցութեան փաստը:

Հանդիպման երկրորդ բաժնում տեղի ունեցաւ ընդունելութիւն եւ ներկաները աշխատանքի շրջագծում զրոյցներ ծաւալեցին միմեանց հետ:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՄԻԱՍՆԱԲԱՐ ՆՇԵՑ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՏՕՆԸ



Կիրակի՝ փետրւարի 11-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ մարզա-մշակութային «Արարատ» միութեան մարզասրահում նշւեց հայկական աւանդական Բուն Բարեկենդան տօնը: Տօնախմբութիւնը, միութեան Երէցների եւ Մշակութային միաւորների համատեղ նախաձեռնութիւնն էր, որը նշանաւորւեց տարազահանդէս մրցոյթով:




Ներկաներին ողջունեցին օրւայ հանդիսավարուհիներ՝ Նազէ Ասատրեանը, Անի Ղազարեանը եւ Նարէ Վարդանեանը, ովքեր նախ հանդէս եկան Յովհաննէս Թումանեանի «Բարեկենդան» հեքիաթից մի հատւածով, ապա՝ տեղեկութիւններ փոխանցեցին տօնին առնչւող աւանդոյթների ու ծէսերի մասին: Մրցութային բաժնում, որի

կազմակերպչական աշխատանքը վերապահուած էր Մշակութային միաւորի վարչութեանը, աւելի քան 70-տարազաւորներ, ներկայացրեցին տարբեր ազգերի ազգային տարազներ եւ իրականացրած հետաքրքիր այլ կերպարներ, որոնց իրաւարար կազմը գնահատեց ըստ լաւագոյն կերպարի, գործադրած ճաշակի, կատարուած աշխատանքի եւ կերպարի մտայղացումի: Իրաւարար կազմը ներկայացնում էին՝ Ալենուշ Մարտոյեանը, Վիոլետ Թորոսեանը, Արսինէ Մարգարեանը եւ Աւենիա Բաղրամեանը: Մինչ իրաւարար կազմի նշանակած գնահատականների ամփոփումը, ոչ մրցութային բաժնում բեմ ելան մեծ թւով տարազաւորներ եւ տարազահանդէսը աւարտեց պարային համարի կատարմամբ, որից յետոյ յայտարարուեց տարազահանդէս-մրցոյթի յաղթողների անունները, որոնք պարգեւատրուեցին կազմակերպիչների կողմից:



Եւ այպէս՝

«Գործադրած ճաշակի» յաղթող յայտարարուեցին

Առաջին՝ Էմիլի Նաւասարդեան

Երկրորդ՝ Թէդի Դաւթեան

Երրորդ՝ Սիսիան Ծառուկեան:

«Մտայղացում» կարգում՝

Առաջին՝ Ծաղգամ հեքիաթի ներկայացման խումբ

Երկրորդ՝ Մերլին Միրզայեան

Երրորդ՝Բենիկ Ծատուրեան

«Կատարուած աշխատանք» բաժնում՝

Առաջին՝ Արթուր Քամարզարեան

Երկրորդ՝ Էմինէ Խուդաբախշեան

Երրորդ՝ Սինթիա Պօղոսեան

«Լաւագոյն կերպար» կարգում՝

Առաջին՝ Սելին Բաղրամեան

Երկրորդ՝ Անի-Քրիստի Աղաբաբյեան

Երրորդ՝ Ալին Վարդումեան:

Երեկոյի ընթացքում բազմահարիւր ներկաներ ճաշակեցին Երէցների միաւորի վարչութեան եւ ամբողջ անձնակազմի միջոցով պատրաստուած ուտեստեղէնները. միաւորը կազմակերպել էր նաեւ դիմակների վաճառք, իսկ երեխաները առիթ ունեցան կազամկերպուած կրպակներում օրւան համապատասխան դիմայարդարուել եւ լուսանկարուել:

Դիմայարդարման աշխատանքում համագործակցութիւն էին բերել Մառիէթ Աբէլեանը եւ Վանէ Թորոսեանը:




## ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՀՀ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐԱՆԸ

## ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԹՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ



ՀՀ հիմնադրման 100-ամեակին ընդառաջ, այս տօնին նուիրուած միջոցառումների շարանը մեկնարկեց Սպահանի հայոց թեմի ՀՀ 100-ամեակի Կենտ. յանձնախմբի հովանաւորութեամբ եւ Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան միութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած դասախօսական երեկոյի միջոցով, չորեքշաբթի՝ 2018 թւականի փետրուարի 21-ի երեկոյեան, շրջանի Հայ Դատի յանձնախմբի կենտրոնատեղիի սրահում:

Երեկոյին ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, քահանայից դասի, շրջանի Հայ Դատի յանձնախմբի, ազգային մարմինների, միութիւնների ու հայոց

դպրոցների ներկայացուցիչները եւ մի շարք այլ հրաւիրեալներ:



Բացման խօսքով հանդէս եկաւ կազմակերպիչ միութեան անդամուհի Գայիանէ Եղիազարեանը, ուր կարեւորութեամբ ընդգծեց առաջին Հանրապետութեան առանցքային դերակատարութիւնը Հայաստանի 2-րդ եւ 3-րդ Հանրապետութիւնների ստեղծման գործում եւ հայ կնոջ ազդեցիկ դերը ՀՀ անկախութեան կերտման եւ երկրի բարգաւաճման հարցերում:

Յաջորդիւ «Հայ կինը եւ անկախութիւնը» թեմայի շուրջ դասախօսական զրոյց ծաւալեց գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գունճնեանը:



Դասախօսը նշելով, որ հայոց դարաւոր պատմութեան ընթացքում հայ կինը որպէս ազգասէր, առաջադէմ եւ գործունեայ անհատ, ոչ միայն գերազանցապէս կատարել է իր մայրական պարտականութիւնները, այլեւ պահպանել է ընտանիքի օջախը եւ հոգեւոր արժէքները փոխանցել գալիք սերունդներին, ընդգծեց նաեւ, թէ հայուհին հայկական գոյամարտերին իր մասնակցութեամբ փաստել է, որ խիզախ ու նպատակասլաց է եւ այն անձն է, ով մանուկ հասակից հերոսութիւն եւ ազգասիրութիւն է սերմանում իր զաւակի հոգում ու սրտում:

Հայր Սուրբն անդրադառնալով հայ ժողովրդի պատմութեան էջերում արձանագրուած ճակատագրական հանգրուաններին՝ ի մասնաւորի Վարդանանց եւ Վահանանց պատերազմներին, իսկ աւելի ուշ ժամանակաշրջաններում՝ հայ-թաթարական կռիւներին (1905-1906 թ.թ.) ու ինքնապաշտպանական հերոսամարտերին (1915-1923 թ.թ.), յատկապէս կանգ առաւ այդ իրադարձութիւնների շրջագծում հայ կնոջ հերոսական գործունէութեան վրայ:

Դասախօսն իր խօսքի մի այլ բաժնում կարեւորութեամբ ընդգծելով հայոց պետականութեան վերականգնման գործում հայուհիների դերը եւ այն փաստը, որ Հայաստանն առաջին պետութիւնն է եղել, որտեղ կնոջը ընտրելու եւ ընտրուելու իրաւունք է շնորհուել, ներկայացրեց ՀՀ առաջին խորհրդարանական ընտրութիւններում ընտրուած երեք հայ կին պատգամաւորներ՝ Կատարինէ Մանուկեանին, Վարվառա Սահակեանին եւ Պերճուհի Բարսեղեանին, ինչու չէ նաեւ աշխարհում առաջին կին դեսպան Դիանա Աբգարին: Նա որպէս վերջաբան մէջբերեց Գարեգին Նժդեհի «Մայրերի ափի մէջ պիտի փնտրել ազգի ճակատագիրը» խօսքը եւ շեշտեց, որ հայուհիների կողմից տրուող դաստիարակութիւնից է կախուած մեր զաւակների հայ լինելը:



Շարունակութեան մէջ արտայայտուեց ՀՀ 100-ամեակի Կենտ. յանձնախմբի ատենապետ Թաթուլ Օհանեանը: Նա գնահատելով բովանդակալից դասախօսական ելոյթը՝ ակնարկ կատարեց պատմութեան տարբեր հանգրուաններում հայ կնոջ առանցքային դերին՝ որպէս ստեղծագործութեան եւ ողջամտութեան խորհրդանիշ: Նա գնահատելով նաեւ Ն. Ջ. Հայ Կանանց Գթութեան միութեան այս նախաձեռնութիւնը՝ ներկայացրեց Կենտ. յանձնախմբի անդամներին ու յառաջիկայ ծրագրերը՝ շեշտելով, որ առիթի նշման համար կեանքի են կոչուել Նոր Ջուղայի եւ Շահինշահրի ենթայանձնախմբերը: Վերջում պրն. Օհանեանը կոչ արեց՝ խուռներամ շարքերով մասնակցել պանծալի տօնին նուիրուած բոլոր միջոցառումներին:



## «ԱԿՈՒՆՔ» ՊԱՐԱԽՄԲԻ ԵԼՈՅԹԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Նախաձեռնութեամբ Հայ Ուս. Չհարմահալ միութեան Կենտրոնական եւ Նոր Ջուղայի մասնաճիւղի վարչութիւնների, հինգշաբթի՝ թւականիս փետրուարի 22-ին Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում տեղի ունեցաւ Թեհրանի «Ակունք» պարախմբի ելոյթը:

Հանդիսավար Վանէ Թորոսեանը ողջունելով ներկաներին, նշեց՝ «Հայ ժողովուրդը պահելու եւ պահպանելու է իր ունեցած փայլուն անցեալը, նաեւ դիմաւորելու է իր ապագան, որովհետեւ ստիպած պահել ու պահպանել իրեն ժառանգուած այն ինչ իր պապերը դարերի ընթացքում թանկ են

վճարել նրա համար: Դա լինէր Վարդանանց պատերազմ, Սարդարապատի հերոսական ճակատամարտ, մայիսեան իրականութիւն եւ այլն: Նրանց պահպանման ազդակներից կարեւորագոյնը նկատեց հայ եկեղեցին, լեզուն եւ մշակոյթը, հետեւաբար սփիւռքեան պայմաններում ստիպած է զարգացնել եւ առաջադիմութիւններ արձանագրել վերոշեալ խնդիրների կապակցութեամբ: Մշակութային ասպարէզում միութիւնները զբաղեցրել են իրենց իւրայատուկ տեղը եւ նշանակութիւնը:»



Ցուեց տեսանիւթ, որը ներկայացնում էր «Ակունք»-ի գործունէութիւնը: Պարախմբի ղեկավար եւ բեմադրիչն է Կարինէ Մանուչէրեանը, իսկ փորձավարը՝ Մելինէ Այվազեանը:

Փայլուն կատարողականութեամբ 18 համարներով հանդէս եկաւ «Ակունք» պարախումբը, որոնք ներկայացրին հայկական, իրանական եւ այլ ոճի պարեր: Պարախմբի հեսաճկուն աղջիկների եւ առնական տղաների միջոցով հրամցւեց մեծամասնութեամբ հայկական պարեր:





Պարերը ընդմիջեց Վեհանուշ Խուդաբախշեանը «Անդարձութիւն» եւ «Պարտք» բանաստեղծութիւնների արտասանելով եւ Վանանդ Իսաղուլեանը «Հայի զաւակ» եւ «Տուն իմ հայրենի» երգերի կատարումներով:



Համերգի աւարտին շնորհակալական խօսքերով հանդէս եկաւ Հայ Ուս. Չհարմահալ միութեան Կենտ. վարչութեան նախագահ՝ Արշաւիր Քեշիշեանը:



Յանուն Նոր Ջուղայի մասնաճիւղի վարչութեան յուշանուէր յանձնեց «Ակունք» պարախմբի ղեկավար՝ Կարինէ Մանուչէրեանին, ով իր հերթին յուշանուէրներ յանձնեց միութեան Կենտ. եւ մասնաճիւղի վարչութիւններին:

Ծրագրի աւարտին արտայայտուեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ՝ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեան «Այսօրուայ ելոյթը գեղեցիկ, յաջող, վայելուչ եւ գնահատելի էր: 32 տարի առաջ «Ակունք» պարախմբի սերմերը ընկել են վարար հողի վրայ: Սկզբնական տարիներին եղել է կազմակերպչական աշխատանք, մինչեւ 94-95 թուականներին սկսեալ տարբեր տարի առաւել եւս յաջողութեամբ եւ վարպետութեամբ սկսել են իրենց ելոյթները ներկայացնել:



Ակունքը պարախումբը ընտրուել է, որպէս Հայաստանի պարախմբերից մի յատիկ, եւ այօր եւս որպէս թանկագին ակն, պատուական քար, ոչ միայն զարդարեց եւ լուսաւորեց այս բեմը, այլ նաեւ իր ելոյթով շարժեց մեր աչքերը, մտքերը, սրտերը եւ հոգիներն ու փոխանցեց իր փայլը, որպէս հայ մշակոյթի արտայայտութիւն:» Առաջնորդ Հայր սուրբը իր խօսքը եզրափակեց քաջալերանքի, գնահատանքի եւ շնորհակալութեան խօսքերով:

## ԱՄԱՆՈՐԵԱՅ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Երկուշաբթի՝ 2018 թուականի յունուարի 1-ի երեկոյեան, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» եկեղեցու սրահում տարեմուտի առթիւ տեղի ունեցաւ Ժամերգութիւն եւ մատուցեց Ս. եւ անմահ Պատարագ՝ արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի ձեռամբ եւ դպրաց դասի մասնակցութեամբ:

Արարողութեանը ներկայ էր հաւատացեալ ժողովուրդը, ով Ս. Պատարագի ընթացքում հաղորդութիւն ստացաւ եւ Ամանորի առաջին օրը Բարձրեալին գոհութիւն յայտնելով՝ հայցեց Բարեգութ Տիրոջ օրհնութիւնն ու գթառատութիւնը:

Յաւարտ Ս. Պատարագի քհնյ. Հայրը աղօթելով առ Աստուած օրհնեց բոլորին եւ մաղթեց բարեյաջող եւ խաղաղ տարի:

Իսկ Ուրբաթ՝ յունուարի 5-ին, կէսօրից յետոյ ժամերգութիւն եւ Ճրագալոյցի Ս. Պատարագ մատուցւեց՝ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի նախագահութեամբ եւ արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի ու դպրաց դասի մասնակցութեամբ՝ համայնքի «Սրբոց Վարդանանց» եկեղեցու սրահում:



Ընթացքում Հայր Սուրբն ընթերցեց Ս. Ծննդեան տօնի առիթով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի «Մարդը՝ Աստծու որդու մարդեղութեան նպատակըե խորագրով պատգամը: Ծնորհազարդ Հայրապետն իր պատգամում նշելով, որ քրիստոնէական մտածողութեան մէջ, քիստոսաբանութիւնը եւ մարդաբանութիւնը անքակտելիօրէն իրար հետ առնչւած են եւ մարդը արժէք է Աստծու համար՝ որպէս ստեղծագործութեան պահապան ու պաշտպան, ընդգծել էր. ,Քրիստոսի ծնունդը մի հրաւէր է, վերանորոգւելու Բեթղեհէմի խորհրդով: Քրիստոսի ծնունդը մի յիշեցում է փրկութեան ճանապարհի վրայ գտնւող մարդուն՝ հաւատարմօրէն հետեւելու Քրիստոսին: Քրիստոսի ծնունդը մի կոչ է, մասնակից դառնալու, եկեղեցու ճամբով իրագործւող, փրկագործական առաքելութեանը: Այս գիտակից հաւատով մօտենանք Քրիստոսի ծնունդին ու հաղորդւենք նրա խորհրդով ու պատգամով»:

Յաւարտ Ս. Պատարագի տեղի ունեցաւ նախատօնակ եւ աւետում Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
ձեզ եւ մեզ մեծ աւետիս»:

Շաբաթ՝ յունւարի 6-ի առաւօտեան մատուցւեց Ս. Պատարագ՝ մեր տիրոջ Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան եւ Աստւածայայտնութեան տօների առիթով՝ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի նախագահութեամբ, արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի եւ դպրաց դասի մասնակցութեամբ: Օրւայ խորհրդին ներկայ էին Հայ համայնքի վարչութիւնը եւ ակնառու թւով հայորդիներ:

Քարոզի պահին, հաւատացեալներին իր հայրական խօսքը փոխանցեց պատարագիչ Հայր Սուրբը, ուր անդրադառնալով Յիսուս Քրիստոսի մսուրում ծնւելու հանգամանքին՝ ընդգծեց Քրիստոսի համեստութիւնն ու խոնարհութիւնը՝ Բարձրեալի կամքի եւ նախախնամութեան հանդէպ: Հայր Սուրբն իր խօսքում նշեց. «Փրկչին այցելութեան եկող հովիւները եւ մոգերը տեսան, թէ աշխարհի թագաւորը ծնւել է մսուրի մէջ, եւ իրեն այցի եկողները նոյն մեղաւոր մարդիկ էին, ովքեր սպասում էին Յիսուս Քրիստոսի գալստեան: Յիսուս Քրիստոսը աղքատացաւ մեզանից իւրաքանչիւրի համար, որպէսզի մենք հարստանանք: Քրիստոս աշխարհ եկաւ եւ իր ծնունդով մարդկանց տւեց չորս հարստութիւն, որոնք իւրաքանչիւր մարդու համար ամէն վայրկեան պէտք են եւ անհրաժեշտ: Քրիստոս իր ծնունդով մարդ արարծին լոյսի հարստութիւն տւեց՝ լոյս ապրելու, լոյս տեսնելու, լոյս լուսաւորւելու, լոյս ճանապարհւելու, որպէսզի մեղաւոր մարդը խաւարը դնի մէկ կողմ եւ հետեւի Յիսուս Քրիստոսի լոյսին: Քրիստոս լուսաւորեց մեր սրտերը, մեր հոգիները եւ մեր սրտի, հոգու լոյսը արդէն այսօր արտացոլւում է մեր աչքերից: Երկրորդ՝ Քրիստոսը մարդուն տւեց յոյս: Մարդուն յոյս տւեց նորից ծնւելու եւ իր մեղքերը ներւելու: Որպէսզի մարդը յոյս ունենայ վաղւայ, գալիք ապագայի փրկութեան: Աստւածորդու մարդկութեանը պարգեւած երրորդ հարստութիւնը հաւատն է, որով Փրկիչը զօրացրեց մեր հոգիները, որպէսզի մարդը կերտի ապահով, խաղաղ եւ բարօր աշխարհ՝ Յաւիտենական կեանքի արժանանալու գեղեցիկ տեսլականով:

Իսկ մեծագոյն պարգեւը՝ խաղաղութիւնն էր, որով Քրիստոս կոչ արեց մարդկանց խաղաղութեան սկզբունքի վրայ հաստատելու կեանքը: Քրիստոսի խաղաղութիւնը, նշանակում է ունենալ սէր և երջանկութիւն ընտանիքներում, համերաշխութիւն ու բարօրութիւն հասարակութիւնների ու պետութիւնների մէջ:

Ուստի մեր միակ նպատակը պէտք է լինի Յիսուսին անվարան հաւատքով ու աներկբայ հետեւելը եւ ամենակարեւորը մեր մէջ միշտ վառ պահենք սիրոյ, հաւատի ու նւիրումի լոյսը:»

Յաւարտ Ս. Պատարագի կատարուեց Ջրօրհնէքի կարգը, որի ընթացքում հնչող աղօթքների եւ շարականների ներքոյ Հայր Սուրբի ձեռամբ Ս. Միւռոնի հեղումով օրհնուեց եւ սրբագործուեց ջուրը:

Ջրօրհնէքի արարողութիւնից յետոյ, Հայր Սուրբը եւ օրւայ խորհրդի խաչքաւոր Բրայան Ծահբազեանի ընտանիքն ընդունեցին շնորհաւորանքներ եւ տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն:

## ՇԱՀԻՆՇԱՀՐԻ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԱՅՑԸ՝ ՇՐՋԱՆԻ ՀՐՇԷՋ ԿԱՅԱՆ



Երեքշաբթի՝ 2018 թւականի յունւարի 13-ի առաւօտեան ժամը 10:30-ին, Շահինշահրի «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի աշակերտութիւնը տեսչութեան եւ ծնողական խորհրդի անդամների ուղեկցութեամբ այցելեցին շրջանի հրշէջ կայան:

Սկզբում դպրոցի տեսչուհի՝ Կարինէ Մինասքանեանը ողջոյնի խօսքն ուղղելով պատկան պատասխանատուներին եւ աշխատակազմին՝ շնորհակալութիւն յայտնեց նրանց մատուցած անձնազոհ աշխատանքի համար: Այնուհետեւ մատչելի լեզւով աշակերտներին ներկայացրեց հրշէջ կայանում գտնուող՝ հրշէջ ինքնաշարժերի, աշխատակազմի համազգեստների եւ ինչպէս նաեւ հրդեհը մարող անհրաժեշտ պիտոյքների ու միջոցների կապակցութեամբ:

Աշակերտ-ուհիները ծանօթանալով նոր միջավայրի հետ՝ հետաքրքիր ժամանակ անցկացրեցին այնտեղ եւ ձեռք բերեցին նորանոր գիտելիքներ:

## ՏՕՆԱԿԱՆ ԽՐԱԽՃԱՆՔ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ՝ ԱՄԱՆՈՐԵԱՅ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾԻՐՈՒՄ

Կիրակի՝ 2018 թւականի յունւարի 14-ի երեկոյեան՝ Ամանորեայ միջոցառումների ծիրում՝ Շահինշահրի «Հայ կանանց եկեղեցասիրաց» միութեան վարչութիւնը կազմակերպել էր տօնական խրախճանք՝ համայնքի «Սրբոց Վարդանանց»ե դպրոցի սրահում: Ձեռնարկին հրաւիրուած էին համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը, կազմակերպիչ միութեան անդամները եւ հրաւիրեալները:




Սկզբում միութեան նախագահուհի տկն. Անահիտ Օհանեանը իր ողջոյնի խօսքն ուղղելով ներկաներին շնորհաւորեց Ամանորի եւ Սբ. Ծննդեան տօների կապակցութեամբ եւ մաղթելով բոլորին բարեբեր, բարեյաջող եւ երջանկաբեր տարի՝ խօսքը փոխանցեց Հայր Սուրբին, ով իր գոհունակութիւնը յայտնելով այս գեղեցիկ խրախճանքի կապակցութեամբ՝ ինչպէս միշտ իր բարձր գնահատանքի խօսքն ուղղեց «Հայ կանանց եկեղեցասիրաց» միութեան անդամներին, ովքեր միշտ ժրաբար աշխատում են եւ իրենց կազմակերպած նախաձեռնութիւններով համայնքում ստեղծում են խանդավառութիւն: Հայր Սուրբն եւս մաղթելով, որ 2018 թւականը հանդիսանայ նորանոր ձեռքբերումների եւ առաջադիմութիւնների տարի օրհնեց եւ ուղղորդեց բոլորին, որպէսզի բարձր գնահատեն Յիսուս Քրիստոսի՝ մարդկութեանը պարգեւած չորս հարստութիւնը՝ լոյսը, յոյսը, հաւատը եւ խաղաղութիւնը:

«Զանգակներ» երաժշտութեան եւ ներկաների ուրախ բացականչութիւնների ներքոյ ձմեռ պապն ու ձմեռ տատը մուտք գործեցին սրահ, ովքեր աւելի համեմեցին կազմակերպուած Ամանորեայ միջոցառումը եւ մրգեր նւիրեցին հանդէսում ներկայ մանուկներին:

Ամանորին նւիրուած բանաստեղծութիւններով արտայայտւեցին անդամուհիներ Քարմէն Յակոբեանը, Նաարդ Փանոսեանը, Նարմիկ Դէհբաշեանը եւ Հերմինէ Մանուկեանը:

Օրւայ առիթով նաեւ ելոյթ ունեցաւ արժն. Քհնյ. Հայրը, ով աղօթք բարձրացնելով Բարձրեալին՝ շնորհաւորեց Ամանոր եւ Սբ. Ծնունդը եւ մաղթեց միութեանը առաւել ոյժ ու կորով եւ յաջող ու բարի գործունէութիւն:



Միութեան նախագահուհին իր շնորհակալական խօսքն ուղղելով Հայր Սուրբին՝ միութիւնը հովանաւորելու, առաջնորդելու եւ քրիստոնէական դաստիարակութեան գործում կատարած ներդրումի համար, ինչպէս նաեւ Քահանայ Հօրը՝ միութեանը ցուցաբերած ցուցումների եւ խորհուրդների համար, մաղթեց նրանց քաջառողջութիւն, արեւշատութիւն եւ երկար տարիների բարի ծառայութիւն: Տկն. Օհանեանը շնորհակալութիւն յայտնեց նաեւ «Հայ Համայնքի Վարչութեանը»՝ ձեռնարկը հովանաւորելու եւ սրահը տրամադրելու համար:

Խրախճանքի ընթացքում բոլոր ներկաները վայելեցին կազմակերպւած գեղեցիկ հիւրասիրութիւնը եւ հայկական երգ ու պարով առաւել ջերմացրին մթնոլորտը:

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ՝ ՏՕՆԱԿԱՆ ԱՌԻԹՈՎ



Չորեքշաբթի՝ 2018 թւականի յունւարի 17-ի առաւօտեան ժամը 11:30-ին, Ս. Յովհաննու Կարապետի ծննդեան տօնի առիթով, Շահինշահրի հայ համայնքի վարչութիւնը՝ համայնքի հոգեւոր տեսուչ՝ Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի ուղեկցութեամբ այցելեց Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի ընթացքում նահատակւած լուսահոգի Մկրտիչ Թումասեանի ընտանիքին եւ հանդիպում ունեցաւ յիշեալ նահատակի մօր հետ:

Այցելուները յարգելով նահատակ Մկրտիչ Թումասեանի անմար յիշատակը, հրուշակեղէն ու քաղցրաւենիք նւիրեցին եւ շնորհաւորեցին նրա մօրը՝ հերոս որդու անւանակոչութեան տօնի կապակցութեամբ եւ մաղթեցին, որ 2018 թւականը բարի եւ յաջող տարի լինի Թումասեան ընտանիքի համար: Նրանք նոյնպէս լսեցին նահատակի մօր յայտնած խնդիրները եւ դժւարութիւնները՝ խոստանալով համապատասխան լուծումներ գտնել դրանց հարթելու համար:

## «ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ» ՏՕՆԸ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Չորեքշաբթի՝ 2018 թ. փետ. 7-ին, Շահինշահրի եկեղեցու եւ դպրոցի անւանակոչութիւնը պատեհ առիթ համարելով, «Սրբոց Վարդանանց» տօնի նախօրէին, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում տեղի ունեցաւ գառազենման եւ Աղօրհնէքի կարգը՝ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի ձեռամբ եւ Համայնքի վարչութեան նախաձեռնութեամբ:

Իսկ հինգշաբթի՝ փետ. 8-ի առաւօտեան, «Սրբոց Վարդանանց» եկեղեցու սրահում սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի ձեռամբ, մասնակցութեամբ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի եւ արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի եւ դպրաց դասի:



Արարողութեանը ներկայ էին թեմի ազգային մարմինների ներկայացուցիչները, «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի եւ «Սրբոց Վարդանանց» դպրոցի ուսուցչական կազմը, ծնողական խորհուրդը, աշակերտութիւնը եւ բազում հաւատացեալներ:

Քարոզի ընթացքում Պատարագիչ Հայր Սուրբն ընթերցեց Հայաստանի Ա. Հանրապետութեան հիմնադրութեան 100-ամեակին նւիրւած

Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Կաթողիկոսի Կոնդակը:

Սուրբ Պատարագից յետոյ տեղի ունեցաւ Մատաղօրհնէքի կարգը եւ մատաղը բաժանեց բարեպաշտ ժողովրդին: Այնուհետեւ հաւատացեալները հրաւիրուեցին ճաշակելու օրւայ առիթով պատրաստուած ճաշը:

Հայ համայնքի վարչութեան անունից՝ վարչութեան քարտուղար Վիոլետ Յարութիւնեանը բարի գալուստ մաղթելով բոլորին՝ շնորհաւորեց երեք բարեբաստիկ առիթների՝ Ս. Ղեւոնդեանց քահանայից տօնի, «Սրբոց Վարդանանց» եւ ինչպէս նաեւ համայնքի եկեղեցու անուանակոչութեան տօների կապակցութեամբ եւ ապա հրաւիրեց Թեմի Առաջնորդին ճաշի սեղանն օրհնելու:

Ճաշկերոյթի ընթացքում համայնքի «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի եւ «Սրբոց Վարդանանց» դպրոցի աշակերտ-ուհիները՝ հայրենասիրական ասմունքներով եւ երգերով ներկայացրեցին իրենց գեղեցիկ ելոյթը՝ «Սրբոց Վարդանանց» տօնին նւիրուած:

Յատկանշելի է, որ «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի սաների համար դպրոցի տեսչութեան եւ ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ նաեւ երկուշաբթի՝ թ. փետ. 5-ի առաւօտեան կազմակերպել էր «Վարդանանց պատերազմի» ֆիլմի ցուցադրում:

Սոյն խորհրդաւոր օրւայ ընթացքում նաեւ Ս. Ղեւոնդեանց քահանայից տօնի առիթով, համայնքի Վարչութեան կողմից նւէրներ յանձնուեցին գերպ. Հոգեւոր հայրեր Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանին եւ Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանին, արժ. Տ. Սահակ քհնյ. Մինասեանին եւ բարեկրօն Սեւադա սրկ. Իսաղուլեանին:



Յատկանշելի է, որ շնորհակալական խօսքի արժանացան Նոր Ջուղայի Եկեղեցեաց վարչութիւնը, հարիսա պատրաստելու եւ ճաշկերոյթի կազմակերպման աշխատանքում՝ իրենց համագործակցութիւնը ցուցաբերած յանձնախմբերը, համայնքի հայոց ազգային զոյգ դպրոցների տեսչութիւնը եւ ուսուցչական կազմը, եւ օրւայ խորհրդին մասնակցած հաւատաւոր ժողովուրդը:

Օրւայ առիթով իր հայրական պատգամը հաղորդելով՝ Թեմի Առաջնորդն իր հիացմունքը յայտնեց ակնառու թւով արարողութեանը մասնակցող ժողովրդին եւ դրուատեց նրանց դրսեւորած ազգային գիտակցութիւնն ու գոհունակութիւն յայտնեց, որ իրեն զօրավիգ է համայնքի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը: Թեմի Առաջնորդը իր խօսքում նաեւ բարձր գնահատեց ազգային մարմինների, ենթամարմինների, հայ կրթօջախների դրսեւորած միահամուռ եւ միասնական գործունէութիւնը: Թեմի առաջնորդն իր խօսքի աւարտին օրհնեց բոլորին եւ յոյս յայտնեց, որ նմանատիպ սիրոյ եւ հաւատքի սեղաններ յաճախակի են կազմակերպւելու եւ հաւատացեալները համախմբելու են իրենց ուխտը նորոգելու ազգային եւ կրօնական արժէքների ու սկզբունքների հետ:

Յատկանշական է, որ վերոնշեալ արարողութիւնների ընթացքում ուխտաւորներն իրենց խորհուրդը կատարել էին նւիրատւութիւններով:

## ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ



Երկուշաբթի՝ 2018 թւականի փետրուարի 12-ի առաւօտեան ժամը 9:00-ից՝ Շահինշահրի «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեան եւ ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ նշւեց Բուն Բարեկենդանը՝ ծնողների ներկայութեամբ:

Սաներն իրենց գունագեղ զգեստներով առաւել փայլ էին հաղորդել կազմակերպւած տօնին:

Տօնականօրէն զարդարւած դպրոցի սրահում՝ սաները ուրախ արտասանեցին, երգեցին ու պարեցին՝ աշխոյժ ծաղրածուների ընկերակցութեամբ:

Խնջոյքի ընթացքում, բոլոր ներկաները վայելեցին օրւայ առիթով կազմակերպւած համեստ հիւրասիրութիւնը:

Խրախճանքի աւարտին ծնողական խորհրդի ձեռամբ փաթեթաւորւած մրգերը նւիրուեցին սաներին:

## ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԸ ԵՒ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹԻՒՆԸ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Երեքշաբթի՝ 2018 թւականի փետրւարի 13-ի առաւօտեան ժամը 11:30-ից Շահինշահրի հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ- նախակրթարանը եւ «Սրբոց Վարդանանց» տարրական դպրոցի աշակերտութիւնը մասնակցեցին՝ զոյգ դպրոցների տեսչութեան եւ ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ կազմակերպւած աւանդական Հրավառութեանը եւ Տեառընդառաջին: Օրւայ խորհրդին ներկայ էին համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը, համայնքային Վարչութեան ներկայացուցիչներն եւ ուսուցչական կազմը:

Ամենասկզբում գերպ. Հայր Սուրբը հանգամանօրէն, եւ աշակերտներին մատչելի լեզւով բացատրեց Տեառընդառաջի խորհուրդը, որից յետոյ աշակերտները հաւաքւեցին նախապէս պատրաստւած թուփի շուրջ, որը բոցավառւեց պատասխանատուների ձեռամբ:

Աշակերտները դպրոցական անձնակազմի հետ միասին շրջան կազմելով խարոյկի շուրջ՝ երգեցին եւ զւարճալի պահեր վայելեցին:

Այնուհետեւ բոլոր ներկաները հիւրասիրւեցին զոյգ դպրոցների ծնողական խորհուրդների ձեռամբ պատրաստւած հրուշակեղէնով, քաղցրաւենիքով եւ աղանձով:





## ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԸ ԵՒ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹԻՒՆԸ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Երեքշաբթի՝ 2018 թւականի փետրւարի 13-ի երեկոյեան, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» եկեղեցու շրջափակում տեղի ունեցաւ Տեառընդառաջի նախատօնակ եւ աւանդական հրավառութիւն՝ համայնքի հոգեւոր տեսուչ՝ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի ձեռամբ եւ արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի եւ դպրաց դասի մասնակցութեամբ:



Օրւայ արարողութեանը ներկայ էին Հայ Համայնքի Վարչութիւնը, միութիւնները, ուսուցչական կազմերը, ծնողական խորհուրդները եւ համայնքի անդամները:

Եկեղեցական արարողութեան ընթացքում կատարւեց նորածիններին՝ տաճար ընծայելու կարգը:

Եկեղեցական արարողութեան աւարտին, գերպ. Հայր Սուրբը ներկայացրեց Տեառընդառաջի խորհուրդը եւ անդրադառնալով ընթացիկ Մեծ Պահքի օրերին՝ գեղեցկօրէն բացատրեց պահեցողութեան բուն իմաստը՝ ընդգծելով ճշմարիտ հաւատացեալի պահւածքը եւ կեցւածքը պահեցողութեան շրջանում եւ ընդհանրապէս որպէս Քրիստոսի օրինակին հետեւորդ: Գերպ. Հայր Սուրբը կարեւորելով ֆիզիքական պահեցողութիւնը, առաւել կարեւոր համարեց հոգու պահեցողութիւնը՝ չար մտքից, չար լեզւից եւ չար խորհրդից: Հետեւաբար պահեցողութիւնը Աստծուն ընդունելի համարեց այն ժամանակ, երբ հաւատացեալը հետեւի բարուն եւ զերծ մնայ հոգին, սիրտն ու միտքը ապականող որեւէ խնհից ու ցանկութիւնից:



Նա քարոզի աւարտին իր եւ համայնքի Վարչութեան անունից շնորհաւորելով Տեառընդառաջը՝

օրհնեց նորածիններին եւ բարեմաղթեց նորապսակներին անմար սէր, փոխադարձ յարգանք, ամուր ընտանիք, երջանկութիւն եւ բարօրութիւն:

Նախատօնակի արարողութիւնից յետոյ, գերպ. Հայր Սուրբի աղօթքով եւ նորապսակ զոյգերի միջոցով բոցավառուեց շրջափակում տեղադրուած հսկայ թուփը, որին յաջորդեց տօնական տրամադրութիւնը կրակի շուրջ:

Այնուհետեւ նորապսակ զոյգերը եւ նորածինները իրենց ծնողների հետ մեկնեցին Նոր Ջուղա՝ մասնակցելու Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի նախաձեռնութեամբ կազմակերպուած ձեռնարկին:

## ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Կիրակի՝ 2018 թուականի փետրուարի 25-ի երեկոյեան ժամը 6-ին, նախաձեռնութեամբ Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի տեղի ունեցաւ խորհրդակցական հանդիպում Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» համայնքային կենտրոնում: Սոյն հանդիպմանը ներկայ էին թեմի առաջնորդ Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, համայնքի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա ծ. վրդ. Գունճանեանը, արժ. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը, համայնքի պատգամաւորները, Թեմական եւ Կրօնական խորհուրդների, համայնքի Վարչութեան եւ միութիւնների, Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչները եւ հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի եւ «Սրբոց Վարդանանց» տարրական դպրոցի տեսչութիւնը, ուսուցչական կազմը եւ մի քանի հրաւիրեալներ:

Սոյն հանդիպման գլխաւոր թեման էր համայնքի թւային նուազեցման հետեւանքով առաջացած մի շարք խնդիրներ եւ դժւարութիւններ, որոնք անտարակոյս անդրադառնում են համայնքի ազգային կեանքի տարբեր ոլորտներին՝ ի մասնաւորի հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարան եւ տարրական դպրոցների ու միութենական կեանքի գործունէութեանը:



Ժողովը բացւած յայտարարեց Պատգամաւորական ժողովի ատենապետ Թաթուլ Օհանեանը, ով ներկայացրեց ժողովի օրակարգը եւ հրաւիրեց ներկաներին արտայայտելու իրենց տեսակէտները, մտահոգութիւնները, եւ նաեւ լուծումներ առաջարկել պարագայաբար առաջացած խնդիրները եւ խոչընդոտները վերացնելու կամ առնուազն կասեցնելու ուղղութեամբ:

Ժողովը համայնքի ապագայի մասին աւելի յստակ պատկերացում կազմելու համար որդեգրեց իրատես լինելու գաղափարը եւ այս լոյսի ներքոյ արտայայտուեցին թեմի առաջնորդը, համայնքի հոգեւոր տեսուչը, քհնյ. հայրը եւ ներկաներից մի քանիսը, ովքեր միաժամանակ պահպանեցին կացութիւնը ճշգրիտ գնահատելու եւ իրերին իրենց անունով կոչելու սկզբունքը:

Համայնքի ստեղծւած դժւարութիւնները թւարկելով, ժողովը շօշափեց հայոց միջնակարգ դպրոց չունենալու իրողութիւնը, իսկ միութենական կեանքում բիւջէտային խնդիրները եւ մարդուժի պակասը: Անդրադառնալով անցեալում թեմի Կրթական խորհրդի եւ հայ համայնքի Վարչութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած հայերէն դասընթացներին, նշուեց որ դժբախտաբար այս վերջին տարիներին նոյնիսկ հայ համայնքի Վարչութեան ցուցաբերած ջանքերով հանդերձ՝ մի շարք պատճառաբանութիւնների բերումով նշեալ դասընթացների կազմակերպումը չեն ընդառաջուել աշակերտների կողմից, սակայն յամենայն դէպս Պատգամաւորական ժողովի դիւանը պնդեց, թէ ելքեր են փնտռելու աշակերտներին խրախուսելու եւ սիրաշահելու ուղղութեամբ եւ յաջորդ ուսումնական տարեշրջանից անտարակոյս կազմակերպւելու են նշեալ դասընթացները՝ լրացնելու պարսկական դպրոց յաճախող հայ աշակերտի հայեցի դաստիարակութեան բացը:

Համայնքի առջեւ ծառացած գերխնդիրները դիմագրաւելու համար, հնչեցին մի շարք առաջարկութիւններ եւ ժողովականները ընդգծեցին նաեւ միասնականութեան ազդեցիկ դերակատարութիւնը յաջողութիւններ եւ ձեռքբերումներ արձանագրելու ուղղութեամբ՝ բոլորը մի ընդհանուր յայտարարի գալով, թէ իրենց ջանքերն ի սպաս են դնելու համայնքի ազգային կեանքն իր բնականոն հունով ընթանալու համար:

Սոյն հանդիպումն աւարտուեց երեկոյեան ժամը 8:30-ին:

# ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ ԱՆՆԻԿ ՍԻՄՈՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՀԱՆԳՈՒՑԵԱԼԻ ՄԱՀՈՒԱՆ ՔԱՌԱՍՆՕՐԵԱԿԻ ԱՌԹԻՒ



Կրթական անխոնջ մշակները անմահ են. նրանք իրենց տիպար կեցւածքով ու նւիրական առաքելութեամբ անմահանում են բոլորի՝ յատկապէս իրենց դաստիարակած սերունդների հոգիներում ու սրտերում:

Ուսուցչուհի Աննիկ Սիմոնեանը ծնւել է 1937 թւականին Չհարմահալ գաւառի Աղբուլաղ գիւղում: Մանուկ հասակում առ յաւէտ կորցնելով իր հօրը՝ իր եղբօր ու մօր հետ բնակութիւն է հաստատում նախ Նոր Ջուղայում, ապա Աբադանում, որտեղ էլ աւարտում է իր միջնակարգ կրթութիւնը:

Հայոց ազգային դպրոցների ժամանակի հոգաբարձութեան հրաւէրով, 1975 թւականին որպէս հայերէն լեզւի ուսուցչուհի աշխատանքի է անցնում Աբադանի «Ադաբ» դպրոցի տարրական բաժնում: Ուսուցչութեան աշխատանքին զուգահեռ մի քանի ուսումնական տարեշրջան վարում է դպրոցի գրադարանավարուհու պաշտօնը: Եղել է նաեւ նոյն դպրոցի սկաուտական խմբի սկաուտապետը:

Այնուհետեւ Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի պատճառով տեղափոխւում է Նոր Ջուղա, ուր նոյն աշխատանքը շարունակում է Նոր Ջուղայի «Արմէն» տղայոց տարրական դպրոցում (այժմ «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիր) մինչեւ հանգստի կոչւելը:

Պաշտօնավարութեան 30 տարիների ընթացքում նա վաստակեց ոչ միայն իր աշակերտների, ծնողների ու գործընկերների, այլեւ ամբողջ համայնքի սէրն ու յարգանքը: Օր. Աննիկը յայտնի էր աշակերտների նկատմամբ իր սրտացաւ ու հոգատար վերաբերմունքով, եւ այդ յատկութիւնով էլ փայլեց մինչեւ իր կեանքի վերջին օրերը: Նրան յաճախ կարող էիր տեսնել իր նախկին աշակերտների որպիսութեան մասին տեղեկանալիս կամ էլ նրանց յաջողութիւններով ուրախանալիս:

Ուսուցչուհին կրթական ասպարէզում ունեցած իր գործունէութեանը զուգահեռ, որպէս հայրենասէր եւ համայնքի ապագայով մտահոգւած անձնաւորութիւն դերակատարութիւն է ունեցել ազգային-հասարակական բազմաթիւ աշխատանքներում: Նա դեռ պատանեկան տարիքից անդամագրւել է Հ.Յ.Դ. պատանեկան միութեան, իսկ յետագայում Հ.Յ. Դաշնակցութեան շարքերը՝ մինչեւ իր մահը հաւատարիմ մնալով կուսակցութեան գաղափարներին:

Եղել է նաեւ Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան երէցների միաւորի հիմնադիր անդամներից ու երեք շրջան ընտրւել նոյն միաւորի վարչութեան անդամ: Նա աշխոյժ մասնակցութիւն էր բերում համահայկական ծրագրերին ու յատկապէս ի օգուտ հայրենիքի կազմակերպւող նւիրահաւաքներին:

Հայրենասէր ու նւիրւած ուսուցչուհին իր մահկանացուն կնքեց 2017 թւականի դեկտեմբերի 19-ին, խորը վշտի մատնելով իր հարազատներին եւ այն բոլոր անհատներին, ովքեր բախտ էին ունեցել վայելելու նրա համեստ ու հոգատար բնաւորութիւնը:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

# ՆՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն.Ջ. Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութիւն

***Զանազան նուիրատուութիւններ***

-200.000 ռիալ. Կարօ Պետրոսեան

***Ս. Գէորգ եկեղեցի***

-4.000.000 ռիալ. Աքրամ
-2.500.000 ռիալ. Ոմն
-500.000 ռիալ. Ժուլիէթ Իսայեան
-200.000 ռիալ. Կարօ Պետրոսեան
-150.000 ռիալ. Ռահիմեան
-100.000 ռիալ. Սարգիս Երան

***Խաչի զոյգելու համար***

-200.000-ական ռիալ. Արարատ Ծառուկեան, Ոմն (2 պարագայ)
-100.000-ական ռիալ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեան, Խաչատուր Զարգարեան

***Ս. Մինաս եկեղեցի***

-500.000 ռիալ. Արթին Դաւթեան՝ ի յիշատակ Վարդանուշ Թունեանի 40-օրեակի առթիւ
-Եկեղեցու տօնի առթիւ թէյի բաժակներ եւ գդալ եւ պատառաքաղ մէկ միլիոն ռիալ արժողութեամբ. Մինաս եւ Մինուշ Մինաս Խաչիկեաններ
-40 հատ թէյի բաժակ. Անդրէ եւ Սեդա Յակոբեաններ՝ իրենց որդու Ամասեա Յովհաննէս Յակոբեանի խաչքաւորութեան առթիւ

***Ս. Սարգիս եկեղեցի***

-Սեղանի նորոգութիւն. Վահիկ Մկրտչեան
-Եկեղեցու հոսանքի բանալիների նորոգութիւն. Վրդանէս Մկրտչեան

***Ս. Սարգիս եկեղեցու անուանակոչութեան տօն***

**-Մատաղացու գառների նւիրատուներ.** Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեան, Անետ Ղազարեան, Սէրօ Շահիջանեան, Էդիկ Յովսէփեան, Դերենիկ Աղախանեան, Արէն Զարգարեան, Տիգրանուհի Ղարիբեան, Վիգէն Մարգարեան, Արաքս Առաքելեան, Աղասի Դաւթեան, Ռուբէն Մկրտչեան, Նարեկ Օրօջեան, Ոմն (2 պարագայ)
-5.000.000-ական ռիալ. Գառնիկ եւ Հրանոյշ Զարգարեաններ, Վանուհի Ղազարեան, Գէորգ Քեշիշեան, Զաւէն Կիրակոսեան, Արբի եւ Մելինէ Բաբումեաններ
-3.000.000 ռիալ. Սեւակ եւ Արմինէ Խաչատրեաններ
-2.000.000-ական ռիալ. Հայրօ Քեշիշեան, Մասիս Հայրապետեան
-1.500.000-ական ռիալ. Յարութիւնեան եւ Աւետումեան, Թորոսեան ընտանիք
-1.000.000-ական ռիալ. Հրաչ Շահիջանեան, Վազգէն Շահիջանեան, Թումանեան ընտանիք, Սոնիա Քամարզարեան, Թենի եւ Թոմիկ Բաղրամեաններ, Դաւիթ եւ Հրանուշ Մարթիններ, Մեղմիկ եւ Համիկ եւ Թանգիկ Միրզախանեաններ, Ղեւեան ընտանիք, Վարդան եւ Կարինէ Մկրտչեաններ, Արմինէ Հայրապետեան, Արշամ Ղազարեան, Գրիշ եւ Ռուբինա Դիլանչեաններ, Հոմա Արին
-700.000 ռիալ. Արմենակ Ծատուրեան
-600.000 ռիալ. Անուշ Հայրապետեան
-500.000-ական ռիալ. Ղարիբեաններ, Խաչատրեաններ, Իշխան Թահմազեան, Թալին եւ Մուշեղ Մովսիսեաններ, Մհեր Օրօջեան, Սարգիս Ծատուրեան, Ջոհրաբ Ղազարեան, Արմոնդ Առաքելեան, Լուսինէ եւ Էլին եւ Անիա, Նարեկ եւ Արէն Յովսէփեաններ, Գէորգ Յովսէփեան, Ռոբերտ Քեշիշեան, Հայդուկ եւ Սիլւա Կարապետեաններ, Սոնա Սոհրաբեան, Գամեր Թահմազեան, Գիլբերթ Թահմազեան, Արմոնդ Մարկոսեան, Նայիրի եւ Անդրէ Քեշիշեաններ, Անահիտ Ծատուրեան, Անահիտ Թահմազեան, Լուսինէ եւ Գեւիկ Ասատրեաններ, Վարուժ եւ Սթելլա Վարդանեաններ, Մանուշ Շահվալադեան, Արա եւ Հռիփսիկ Սիմոնեաններ, Միրօ եւ Մենուա Յարութիւնեաններ, Հայկազ եւ Արաքս Ղազարեաններ, Արշամ Սէթ-Աղայեան, Լորետա Յակոբեան, Էդնա Փուլադեան, Արաքս եւ Յոլակ Յարութիւնեաններ, Հայրօ Կիրակոսեան, Աբէլեան ընտանիք, Աբգար Ղազարեան, Զաւէն Մուրադեան, Հրաչ Մովսիսեան, Արմինէ Թորոսեան, Սեւակ եւ Նայիրի Ղազարեաններ, Վազրիկ եւ Անուշ Մարկոսեաններ, Ասպետ եւ Լորետա Վարդանեաններ, Համասփիւռ Մարգարեան, Յարութ Յովսէփեան, Մանուրեան ընտանիք, Մանէ Բարսեղեան, Գառնիկ Սարգսեան, Սեւանա Յարութիւնեան, Արմենուհի Բարփեան, Էջմին Խաչիկեան, Սոնիկ Կիրակոսեան, Անուշ Սարգսեան, Լուսիկ Յարութիւնեան, Հրաչիկ Ղազարեան, Հերոս Տէր-Մարտիրոսեան, Մանուշ Պօղոսեան, Միքայէլ Զոհրաբեան, Էմիկ Զոհրաբեան, Ժանէթ

Խուդավերդեան, Ադրինէ եւ Վազրիկ Թահմազեանններ՝ ի յիշատակ Սաքօ Զարգարեանի եւ Արմենուհի Թահմազեանի, Նինարէ Մարկոսեան, Նորիկ Մարկոսեան, Ծաննազ Քիամանէշ, Ֆարիբա Միրզայեան, Ոմն (3 պարագայ)
-400.000-ական ռիալ. Մինաս Թահմազեան, Փայլակ Յակոբեան, Գալստան Սիմոնեան
-300.000-ական ռիալ. Հիլդա Թահմազեան, Վաչէ Ծահիջանեան, Մհեր եւ Մանէ Մարգարեանններ, Զարթիկ Սուքիազեան, Արգին եւ Վանիա Մեսրոպեանններ, Մարգարիտ Ալեքսանդրեան, Թադէ Աղազարեան, Արգին Յովսէփեան, Նւարդ Վարդումեան, Այլին Բաբայեան, Սերժիկ Քեշիշեան, Անուշ Ղարախանեան, Արմոնդ Աղախանեան, Անէթ եւ Ալեքս եւ Արմոնդ եւ Լիլիան եւ Էդին, Արին եւ Մհեր Դաւթեանններ, Լալա Բաղդասարեան
-250.000 ռիալ. Քաւուսի
-200.000-ական ռիալ. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեան, Թորգոմ Բարսեղեան, Վարդուշ Սարուխանեան, Սեւակ Քեշիշեան, Մարթին Թահմազեան, Արթուր Սիրջանեան, Անդրու Մինաս Խաչիկեան, Երեմ Յարութիւնեան, Էմմա Հայրապետեան, Սարօ Ղարիբեան, Սուրէն Մարգարեան, Արեգնազ Թահմազեան, Էմելի Աբրահամեան, Սիրան Սարեան, Վազրիկ եւ Քառոլին Վարդանեանններ, Զւարթ Թահմազեան, Վազգէն Քեշիշեան, Արշալոյս Դաւթեան, Նւարդ Վարդանեան ի յիշատակ Սերժիկ եւ Եսայի Վարդանեանններ, Արգամ Յովսէփեան, Ժանէթ Աղախանեան, Արուսեակ Պօղոսեան, Սերինէ Յակոբեան, Վարդուհի Հայրապետեան, Սեդիկ Պօղոսեան, Թէօ Ծահիջանեան, Րաֆֆի Պարսամեան
-150.000-ական ռիալ. Խաչատուր Ղազարեան, Լինէթ Միրզախանեան
-100.000-ական ռիալ. Կաթողիկ եկեղեցի, Գամեր Աբդալեան, Սուրէն եւ Թինա, Սանդուխտ Ծառուկեան, Մէրի Աղախանեան, Երւանդ Խաչիկեան, Թադէոս Հայրապետեան, Սոնա Սուքիազեան, Շուշան Քեշիշեան, Խաթունիկ Խաչիկեան, Բալիկ Մարտիրոսեան, Լորիկ Բաղդասարեան, Ոմն
-50.000 ռիալ. Արեւիկ Սահակեան

***Հանգուցեալ Ծովինար Յարութիւնեան-Լալազարեանի յիշատակին***

-1.000.000 ռիալ. Արմոնդ եւ Սոնիա Փանոսեանններ
-400.000 ռիալ. Վարուժ Փանոսեան
-200.000-ական ռիալ. Ասպետ Վարդանեան, Վարուժ եւ Սթելլա Վարդանեանններ, Անդրանիկ Յարութիւնեան, Ամրանեանններ
-150.000-ական ռիալ. Լուսիկ Ղազարեան, Կիտուշ Մանուրեան

***Հանգուցեալ Սալբինազ Ստեփանեան-Ղազարեանի յիշատակին***

-500.000-ական ռիալ. Լեւոն եւ Երան Խուդավերդեանններ, Ռուբէն Մկրտչեան, Ծաղկուշ Խուդավերդեան
-250.000 ռիալ. Քառոլին Դիլանչեան
-200.000 ռիալ. Վարդուշ Խուդավերդեան
-150.000 ռիալ. Նվարդ Վարդանեան

***Հանգուցեալ Անուշ Խանլար-Առաքելեանի յիշատակին***

-200.000 ռիալ. Վահիկ Մկրտչեան
-150.000 ռիալ. Սերոժ Խանլարեան

**<u>ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ</u>**

-10.000.000 ռիալ. Անահիտ եւ Հարւէն Քիվիջեանններ՝ իրենց ամուսնու եւ հօր՝ Կարօ Քիվիջեանի յիշատակին
-6.000.000 ռիալ. Արբի եւ Մելինէ Բաբումեանններ
-700.000 ռիալ. Հենրիկ եւ Ժանետ Առաքելեանններ՝ հանգուցեալ Սալբի Ստեփանեանի յիշատակին
-500.000 ռիալ. Մարօ եւ Աւետ Մարկոսեանններ՝ հանգուցեալ Սալբի Ստեփանեանի յիշատակին
-200.000 ռիալ. Անահիտ եւ Հարւէն Քիվիջեանններ՝ հանգուցեալ Սալբի Ստեփանեանի յիշատակին

**<u>ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ</u>**

-2.000.000 ռիալ. Ռիմա Ստեփանեան

**<u>Ն. Ջ. ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԹՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ</u>**
**<u>(ԿԱՐՄԻՐ ԽԱՉ)</u>**

-10,000,000 ռիալ. Մառիէթ Խոջեմալ
-5.000.000 ռիալ. Րաֆֆի Ոսկանեան՝ իր մօր Օֆելիա Խուդավերդեանի յիշատակին
-3.000.000 ռիալ. Կիտուշ Չափչովեանի յիշատակին՝ իր զաւակների կողմից
-1.500.000 ռիալ. Հայ Ուս. Զհարմահալ միութիւն
-1.000.000-ական ռիալ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեան, Փերինազ Օհանեան
-Կառասաթ եւ վիլչեր. Րաֆֆի Ոսկանեան՝ իր մօր

Օֆելիա Խուդավերդեանի յիշատակին
-Նոր տարւայ ճաշ. Յարութ Անջուլեան
-Ընթրիք. Մառիթա Վարդումեան
-Բրինձ եւ իւղ. Ոմն պարսկուհի
-Հաւ եւ ձուկ. Ծահին Ռահ Աւարդ, Նիքխահ, Ոմն պարսկուհի (2 պարագայ)
-Սուրճի հիւրասիրութիւն. Ռայա Խուդավերդեան
-Թխւածքներ. Երան Խուդավերդեան
-Ծաղիկ. Սպահանի Բարեկեցութեան հիմնարկ
-Ծաղիկ եւ նւէր. Թէջառաթ բանկ

***ՀՀ 100-ամեակին նւիրւած դասախօսական երեկոյի առթիւ***
-2.000.000 ռիալ. Սաթօ Աւետումեան
-1.000.000 ռիալ. Հայկազ Դաւթեան
-500.000-ական ռիալ. Հայունեաց Բարեգործական ընկերութիւն, Հայ Ուս. Չհարմահալ միութիւն, Երանուշ Թահմազեան, Այդա Ասատրեան, Մադլէն Ղարիբեան
-400.000 ռիալ. Իզաբէլ Կարապետեան
-300.000-ական ռիալ. Փերիոյ Կրթ. միութեան Կենտրոնական վարչութիւն, Սոնիա Մկրտչեան, Ժուլիետ Կարապետեան

<u>Հայ Ուս. Չհարմահալ Միութիւն</u>
-500.000-ական ռիալ. Արմինէ Ղարախանեան, Նոռա Ծահիջանեան՝ իր մօր հանգուցեալ Լիդա Ջան Ասլանեանի յիշատակին
-300.000 ռիալ. Մարօ Ծատրեան
-250.000 ռիալ. Ժորժիկ Աբրահամեան
-100.000 ռիալ. Վարթանէս եւ Ռիտա Մկրտչեաններ՝ հանգուցեալներ Գեղամ եւ Հեղինար Համբարձումեանների յիշատակին

***Միութեան Ամանորի խրախճանք***
-1.000.000 ռիալ. Յասերժիկ Կարապետեան
-500.000-ական ռիալ. Սոնիա Միրզաբէկեան, Վաչէ Ծահիջանեան, Լուսիկ Ղազարեան, Էդմոն Օրդուբէգեան, Մկրտիչ Չհարմահալի, Վեհանոյշ Խուդաբախշեան, Կարօ Ղարախանեան, Մարօ եւ Կարօ Ծատրեաններ, Արսինէ եւ Նորիկ Աբդալեաններ, Սիրանոյշ Բաբումեան
-400.000-ական ռիալ. Արմոնդ Փանոսեան, Յասմիկ Փանոսեան
-300.000-ական ռիալ. Անահիտ Սէթ-Աղայեան, Վարդուհի Ղարախանեան, Սեդա Բաբայեան, Արմինէ եւ Սեւակ Խաչատրեաններ
-200.000-ական ռիալ. Ֆլորա Ալլավերդեան, Նվարդ Փանոսեան, Պերճիկ Քամարզարեան, Ջարդիկ Սուքիազեան
-100.000 ռիալ. Վանէ Թորոսեան

<u>Ղարոուն Գուրի Ս. Նշան Եկեղեցու Յանձնախումբ</u>
-38.100.000 ռիալ. Վազրիկ Մարկոսեան՝ բակի ասֆալտապատման ծախսերի դիմաց
-1.500.000 ռիալ. Ռիմա Կարապետեան
-1.000.000-ական ռիալ. Արտաւազդ Պարսամեան, Արտաշ Մելիքեան, Թեդի Դաւթեան
-750.000 ռիալ. Հայկ Սարեան
-500.000-ական ռիալ. Գարեգին Մարկոսեան, Հայկազ Ղազարեան, Իշխան Թահմազեան, Յովհաննես Քեշիշեան, Սաքօ Սիմոնեան, Ովաննես Քեշիշեան, Համբարձում Նաւասարդեան, Հիլդա Թահմազեան, Նորիկ Թահմազեան, Արին Պօղոսեան, Սաքօ եւ Վալիա Աղաջանեաններ
-400.000 ռիալ. Ոմն
-200.000 ռիալ. Ծաղկուշ Պօղոսեան
-40.000 ռիալ. Մարթան Դարաբիդեան

<u>Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութ</u>
***«Սրբոց Վարդանանց» Եկեղեցի***
-1.000.000 ռիալ. Անահիտ Այլազեան՝ ի յիշատակ իր մօր Հայկանուշ Թունեանի
***Ս. Սարգիս տօնի առթիւ***
- 200.000 ռիալ. Սոնիկ Յակոբեան
***Սրբոց Վարդանանց տօնի առթիւ***
-3.000.000 ռիալ. Սեդրակ Դեհբաշեան՝ ի յիշատակ Ռաֆիկ Դեհբաշեանի
-1.000.000-ական ռիալ. Արփի Հայրապետեան, Ալիս Մկրտչեան, Մասիս Ծահմիրզայեան,
-500.000-ական ռիալ. Մելքոն Ծիրանեան, Իւրիկ Մարկոսեան, Արմոնդ Հախնազարեան, Փինիկ Հախնազարեան, Վարդուշ Մկրտչեան, Արմոնդ Առաքելեան, Ալբերթ Քեշիշեան,
-300.000-ական ռիալ. Յովհաննէս Թորոսեան, Ոմն
-250.000-ական ռիալ. Անի Մարկոսեան, Նարէ Մարկոսեան,
-200.000-ական ռիալ. Հրաչ Ծիրանեան, Բալաս Դիլանչեան, Վալենթին Թորոսեան, Պետրոս Յովսէփեան, Գառնիկ Միրզախանեան
-150.000 ռիալ. Մայիս Խան Մելիքեան

-100.000-ական ռիալ. Անահիտ Ծառուկեան, Ցողիկ Անդրիասեան

*Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին առընչւող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններինը՝ «Ալիք»-ի թղթակիցները, «Արարատ» Միութեանը՝ Երանուչ Թահմազեանը, Շահինշահրի հայ համայնքինը եւ տեղի «Արարատ» Միութեան մասնաճիւղինը՝ Վիոլեթ Յարութիւնեանը եւ Աիդա Մուրադեանը։*

*Որոշ լուսանկարներ տրամադրում են Գեւիկ եւ Անդրէ Խաչատրեանները։*

**ՄԵՐ ՀԱՍՑԷՆ**
خلیفه گری ارامنه اصفهان و جنوب ایران
صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵
Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran
WWW.Norjugha.ir
WWW.Vank.ir
E-mail: Sourbv@Yahoo.com
**Tel: +98-31-36243471-2**
**Fax: +98-31-36270999**